235
U-55

Георгий
1 ОСТ 2008

ՍՈՒՐԲ ԳԷՈՐԳ

Перевод с русск.

Ռուսերէնից թարգմանեց

Օր. Շուշանիկ Բագրատունի

В дружн. Шушан. Багратуни.

ԹԻՖԼԻՍ

Կ. Մարտիրոսեանցի տպարան | Тип. К. Мартиросіанца.

Орбеліановская ул., д. № 1|2.

1901.

235
Г-55

235
Ս-55

ՄԵԾ ՆԱՀԱՏԱԿ

ԵՒ

ԲԱԶՄԱՅԱՂԹ Ս. ԳԻՈՐԳ

ԶՕՐԱՎԱՐԻ ՎԱՐՔԸ

ԵՒ

ՀՐԱՇԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Ռուսերէնից թարգմանեց

Օր. Շուշանիկ Բագրատունի

ԹԻՖԼԻՍ

Կ. Մարտիրոսեանցի տպարան Тип. К. Мартиросіанца.

Орбеліановская ул., д. № 12.

1901.

22 APR 2013

Дозволено цензурою

Тифлисъ, 16 Декабря 1901 года

4850
41

ՄԵԾ ՆԱՀԱՏԱԿ ԵՒ ԲԱԶՄԱՅԱՂԹ ՍՈՒՐԲ ԳԷՈՐԳ ԶՕՐԱՎԱՐԻ ՎԱՐՔԸ.

Կայսր Դիոկղետիանոսը իւր թագաւորութեան երկրորդ կիսաշրջանում կռապաշտութեան կողմնակից դարձաւ և քրիստոնեաներին չարչարելու համար սոսկալի տանջանքներ և տանջանքներին համաձայն գործիքներ հնարեց։ Բոլոր բանտերը լի էին ոչ մի յանցանքի մէջ չընկատուած անմեղ, քրիստոնեայ կալանաւորներով, իսկ յանցաւորներին ազատութիւն էր շնորհուած։

Այդ ժամանակ Հռոմէացւոց զօրքում ծառայում էր Հելլենացի Գէորգը, ազգով Կապադոկացի։ Նորա ծնողները հասարակական դիրք ունէին, բայց այդ չէր արգելում նրանց քրիստոնեական պարզ և բարեպաշտ կեանք անցկացնել։

Գէորգը, որը դաստիարակուած էր մաքուր հաւատով, մանկական հասակից սկսած Քրիստոնեական հաւատի հիմունքների մէջ թափանցելով՝ ապրում և շ չում էր Քրիստոնեական հաւատի միութարութեամբ։

Դեռ մանկական հասակում նա զրկուեցաւ հօրից, որը նահատակուեցաւ Քրիստոնեական հաւատի համար. նորա մահից յետոյ, մայրը իւր զաւակի հետ տեղափոխուեցաւ Պաղեստին, ուր որ ծնուել էր և ունէր շատ կալուածքներ։

Երբ Գէորգը կատարելահասակ դարձաւ, այրական գեղեցկութեան մի տիպար էր ներկայացնում. նորա դէմքը իւր գեղեցկութեամբ մի հնադարեան արձանի էր նմանւում. մարմինը ամրակազմ էր, վայելչաղիր և առաձգական, ինչպէս մի ըմբշի կամ փէհլիվանի։ Այդ պատճառով էլ նա ընդունուեցաւ կուսակալական անձնապահ զօրքերի շարքում։

Գէորգը պատերազմներում ցոյց տուեց իւր քաջութիւնը և որպէս հերոս, պատուեցաւ Դիոկղետիանոս կայսրից, Կոմսի և զինուորական աստիճանով։ Գէորգը քսան տարեկան հասակն էր մտնում երբ մայրը վախճանուեց։

Երբ որ Դիոկղետիանոսը հրամայեց հանեց Քրիստոնեաների դէմ, այդ ժամանակ Գէորգը ապրքունիքումն էր։ Կայսրի, դէպի Քրիստոնեաները ունեցած, չարութիւնը Գէորգը տեսնելով և գիտենալով ու համոզուելով որ ոչ մի կերպ չի կարող յեղաշրջել նորա գործողութիւնները՝ հասկացաւ որ հէնց այդ ժամանակը ամենաբարեհաջողն է իւր դէպի Քրիստոսը ու-

նեցած հաւատը դործով ապացուցանելու։ Իւր մօտ ունեցած ոսկեղէն, արծաթեղէն իրերը և թանկագին հանդերձները նա կարօտեալներին ու աղքատներին բաժանեց։

Իւր մօտ եղած ստրուկներին ազատութիւն շնորհեց, և Պաղեստինում դտնուած իւր կալուածների և ստրուկների նկատմամբ՝ կտակեց որ կալուածքը բաժանուի չունեցողներին, իսկ ստրուկները ազատուին։

Այնուհետև երրորդ օրը, երբ Փիսկդետիանոսի հրովարտակը պիտի հրատարակուէր, Քրիստոսի դինուորը դէն ձգելով մարդկային ամեն տեսակ երկիւղը, եկաւ սենատ, կանգնեց ժողովի մէջ պայծառ դէմքով և քաջակորով իմաստութեամբ։

«Ո՛վ Կայսր. և դու՛ք, ատենակալներ. ըսկսեց ասել նրանց Գէորգը, դուք կարդուած էք լաւ օրէնքներ կազմելու և արդար դատաստան կատարելու. մինչև ո՞ւր պիտի յանդի ձեր, դէպի Քրիստոնեաները ունեցած, դայրոյթը։ Մինչև երբ պիտի ուելացնէք ձեր մոլեգնութիւնը անարդար օրէնքներ հաստատելով և բոլորովին անմեղ և ոչոքի չնեղացնող մարդկանց դէմ անարդար դատավճիռներ հրատարակելով. մինչև երբ պիտի չարչարէք նրանց և մղէք դէպի անբարշտութիւնն ու անօրէնութիւնը, որոնց մէջ

դուք հաստատուած էք անմտաբար. նրանց՝ որոնք ճանաչել են պատուական երջանկութիւնը: Ձեր աստուածները կուռքեր են և ոչ թէ աստուածներ: Մի՛ մոլորուիք դուք. միայն Քրիստոսն է—Աստուած և Հօր Աստուծոյ փառքի մէջ: Նորանով ամեն ինչ ստեղծուած է և նորա սուրբ Հոգւով ամենայն ինչ կենդանագործուած է: Կամ ինքներդ ճանաչեցէք ճշմարտութիւնը և սովորեցէք բարեպաշտութիւնը. և կամ նրանց, որոնք գիտեն ճշմարտութիւնը և սովորել են բարեպաշտութիւնը, մի խանգարէք ձեր անմտութեամբ:

Բոլորը զմայլուած էին Գէորգի խօսքերով և ապշած նրա Համարձակութեան վերայ: Սենատորների աչքերը յառած էին Դիոկղետիանոսի վերայ. և սպասում էին թէ ինչ կասի նա:

Կայսրը, կարծես որոտումից խլացած լրութեան էր մատնուած. յետոյ ձեռքով նշան արեց իւր բարեկամ Բղէշխի օգնական Մագնենտիոսին որպէս զի նա պատասխանէ Գէորգին:

Բղեշխի օգնականը պատանուն մօտ կանչեց և ասաց նրան:

Ո՞վ դրդեց քեզ մի այդպիսի Համարձակ ու ամբարտաւան քայլ անելու:

Ճշմարտութիւնը. պատասխանեց Գէորգը:

Ի՞նչ ճշմարտութիւն. հարցրեց Մագնենտիոսը:

Ճշմարտութիւնը ինքը Քրիստոսն է. որին հայածում էք դուք. բարձրաձայն գոչեց պատանին։

«Դու Քրիստոնեայ ես. երկիւղով արտասանեց Բդէշխի օգնականը։

Ես ծառայ եմ իմ Քրիստոս Աստուծուն. ասաց Գէորգը, և նրա վրայ իմ յոյսը դնելով ինքնայօժար եկայ ձեզ մօտ, որպէսզի վկայեմ ճշմարտութեանը։

Սենատորների ժողովում անկարգ ձայներ և աղաղակ բարձրացաւ Գէորգի խօսքերից դրդուած։

Այն ժամանակ Դիոկղետիանոսը մունետիկների միջոցաւ տուեց նշան լռութեան և յառելով իւր հայացքը պատանու վերայ, ասաց.

— Ես գեռ առաջ էլ զարմանում էի քո բարձր ծագման վերայ, ով Գէորգ, և քո քաջազործութիւնը պատուի արժան համարեցի, հասցրի քեզ նշանաւոր աստիճանի, և այժմ հաւանելով քո խելքը և քաջութիւնը, խորհուրդ եմ տալիս քեզ, ինչպէս հայր. մի զրկիր, քո անձը զինուորական փառքից և քո բարձրաստիճան պատուից. քո անհնազանդութեամբ պատանեկութիւնդ մի մատնիր տանջանքների. այլ ընդհակառակը զոհ մատուցիր մեր աստուածներին և կստանաս մեզանից մեծ պարգև։

Ո՞Հ. աւելի լաւ էր՝ եթէ դու ինքդ, ով Կայսր, ճանաչէիր ճշմարիտ Աստուածը և մատուցանէիր Նորան, Նորա սիրելի փառքի զոհը. Նա կարժանացնէր քեզ աւելի լաւ և անմահ թագաւորութեան. որովհետև, այդ թագաւորութիւնը, որով դու այժմ վայելում ես՝ հաստատ չէ՝ այլ անցողական է. իսկ Նորա պարգևները կարճատև են, և ոչ մի օգուտ չեն բերած ընդունողին: Քո ոչ մի պարգևը չէ կարող թուլացնել Աստուծուն մատուցած իմ պաշտամունքս, և ոչ մի տեսակ տանջանք և չարչարանք չի վախեցնի իմ հոգիս և չի տատանի իմ միտքս:

Դիոկղետիանոսը խիստ զայրացած և չբթողնելով որ Գէորգը վերջացնի իւր խօսքը, հրամայեց ներկայ եղող զրահակիրներին—արտաքսել նրան սենատից գեղարդներով և բանտարկել:

Նրանցից մէկը շտապով կատարելով իրան հրամայուածը՝ յանկարծ գեղարդով դիպաւ սուրբի մարմնին և ներկաթը ետ ծալուեցաւ իբրև անագ, Գէորգի շրթունքներից փառատրութիւններ էին բարձրանում դէպի Աստուած:

Տանելով նահատակին բանտը՝ զինուորները դրին գետնի վրայ, ոտները պնդացրին կաճ-

ղի մէջ, իսկ կուրծքի վրայ դրին մի մեծ քար, որը սրբանոցիցն էր կապուած։

Գէորգը այս ամենը համբերութեամբ տանում էր և անընդհատ փառատրութիւններ էր վերառաքում առ Աստուած։

Հետևեալ օրը Կայսրը հրամայեց ներկայացնել իրան Գէորգին և ծանր քարից նրան ճնշուած տեսնելով՝ հարցրեց.

— Խելքի եկար արդեօք քո մոլորութիւնից, թէ դարձեալ պիտի շարունակես յամառութիւնդ։

Քարը սաստիկ ճնշում էր նահատակի կուրծքը և նա հազիւ կարողանում էր իօսք արտասանել։

— Միթէ դու, ով Կայսր, կարծում ես, պատասխանեց Գէորգը, թէ ես այնպէս եմ թուլացել՝ որ այսպիսի մի չնչին չարչարանքից ստիպուած կթողնեմ իմ հաւատը։ Աւելի շուտ դու կլոգնես հնարելով ինձ համար տանջանքներ, քան թէ ես կթուլանամ քեզանից նահատակուելով։

Այնուհետև Գիսկղետիանոսը հրամայեց դահիճներին ամենադաժան տանջանքի մի առանձին գործիք բերել — լայն շրջանակի մէջ խրած մեծ անիւ զանազան ձևի սրածայր երկաթ բերաններով, որոնք անիւի հոլովման ժամանակ սարսափելի տանջանք էին պատճառում։

Այդ անիւի վրայ կայսրը հրամայեց նահատակին մերկանդամ կապել և դահիճները ըսկսեցին անիւը պտոյտ տալ։

Մարմնով յօշատուած և իրրև եղէգն փրշրուած Գէորգը համբերում էր այդ բոլոր չարչարանքներին արիաբար, իւր անտանելի տանջանքների սկզբում բարձրաձայն էր աղօթում Աստծուն. իսկ յետոյ՝ կամաց ձայնով էր փառաբանում Նորան...։

Նահատակը ոչ մի հառաչանք չէր արձակում. այլ նմանւում էր մի քնած մարդու, որը ոչինչ չէ զգում։

Կայսրը կարծում էր որ Գէորգը մեռաւ և ուրախանալով՝ փառաբանում էր իւր աստուածներին։

—Ո՞ւր է քո Աստուածը, Գէորգ. բացագանչեց կայսրը, ինչու՞ չազատեց նա քեզ չարչարանքներից. և հրամայեց իջացնել նահատակին անիւից. իսկ ինքը գնաց Ապոլոնի տաճարը։

Բայց յանկարծ ամպեր են երևում, ահեղ որոտմունքներ են լսւում, կայծակներ են շողշողում ինչպէս հրային օձեր և շատերը՝ լսում վերևից եկող ձայնը.

— Մի երկնչիր Գէորգ, ես քեզ հետ եմ։ Մի փոքր ժամանակից յետոյ տեղի ունեցաւ արտասովոր լուսաւորութիւն և երևաց Աստուծոյ

հրեշտակը, որը կանգնած էր անիւի մօտ. նորա կերպարանքը նման էր մի գեղեցիկ պատանու, որը իր հետ կարծես լոյս էր բերում: Ձեռքը Գէորգի վերայ դնելով հրեշտակը՝ ասաց նրան.

—Ուրախացիր.

Ոչ ոք չէր համարձակւում մօտենալ ոչ անիւին, ոչ նահատակին՝ մինչև որ հրեշտակը անհետացաւ: Աստուծոյ ուղարկած հրեշտակը հեռաբեց Գէորգին անիւից և բժշկեց նորան՝ տանջող վերքերից և այնուհետև ինքն իրան իջաւ անիւից:

Բոլորովին առողջացած նահատակը սկսեց փառաբանել Աստուծուն: Տեսնելով այդ բանը զինուորները և դահիճները, ահաբեկուած և շուարած վազեցին դէպի կայսրը. որը տակաւին Ապոլոնի տաճարումն էր:

Զինուորներին հետևեց և Գէորգը. և կայսրի առաջ կանգնեց. որը տեսնելով նահատակին՝ չհաւատաց թէ դա Գէորգն է. ընդունեց նորան իբրև Գէորգի նմանութիւնը կրող մի ուրիշ մարդ:

Կայսրի ուղեկիցները, պալատականները և պատրիկները ուշադրութեամբ նայում էին նահատակի վերայ և չէին ճանաչում նրան.

— Ես Գէորգն եմ. բարձրաձայն ասում էր նահատակը

Բոլորն էլ ահաբեկուած ու շուարած դրբութեան մէջ՝ երկար ժամանակ լուռ էին մընացել։ Պոցանից երկուսը, այն է Անատոլիոս և Գրիգորիոն ստրատելատները, որոնք առաջ ճանաչուած էին իբրև Քրիստոնեաներ, տեսնելով այդ հրաշքը—բժշկուած Գէորգին՝ կատարելապէս ամրացան Քրիստոնեական հաւատի մէջ։

— Մէկ է ճշմարիտ և մեծ Աստուածը. Դա Քրիստոնեաների Աստուածն է. բացականչեցին դոքա։

Թագաւորը իսկոյն հրամայից առանց որևէ դատաստանի տանել նրանց քաղաքից դուրս և գլխատել։

Այդ ժամանակ՝ և շատ շատերը հաւատացին Քրիստոսին, բայց երկիւղից ստիպուած՝ դաղտնի էին պահում այդ հաւատը և չէին հրատարակում։

Ղէքսանդրա կայսրուհին տաճարումն էր. և տեսնելով հրաշալի կերպով առողջացած նահատակին և հրեշտակի յայտնուիլը լսելով՝ ճանաչեց ճշմարտութիւնը. նա հավարձակօրէն կամենում էր խոստովանել և դաւանել Քրիստոսին, բայց դրան արգելեց պալատական նախարարը. և որպէսզի Թագաւորը չիմանայ՝ հրամայեց պալատականներին առաջնորդել նրան դէպի պալատը։

Ամբարշտութեան մէջ յամառացած և չարագործութիւնների մէջ արմատացած Դիոկղետիանոսը հրաման հանեց ձղել սուրբին չըհանդչող կամ խամ կրով լիքը գուբի մէջ երեք օր ժամանակով։

Նահատակը դնալով այնտեղ՝ բարձրաձայն աղօթում էր Աստուծուն։

— Ո՛վ Փրկիչ չարչարուողների, ապաստան հալածուածների, յոյս անյոյսների. Տէր Աստուած իմ, լսիր ծառայիդ աղօթքը և նայիր ինձ վրայ և ողորմիր ինձ և տուր ինձ, որ մինչև վերջը քո Սուրբ Անուան դաւանանքը անփոփոխ կերպով պահպանեմ. Տէր, իմ մեղքերիս համար մի թողուր ինձ, որպէսզի իմ թերշնամիքը չասեն. «Թէ ո՞ւր է դորա Աստուածը բայց ցոյց տուր քո ոյժը և ինձանով փառաւորիր քո Անունդ քո Անարժան և Անպիտան ծառայի մէջ։ Ուղարկիր քո պահապան հրեշտակը ինձ անարժանիս. Դու՝ որ Բաբէլոնեան հնոցը դարձրիր զովարար ցողի և քո Սուրբ մանուկներին անվնաս պահպանեցիր։ Տէր Օրհնեալ յաւիտեան։ Գէորգը խաչակնքելով իրան՝ մտաւ փոսը ուրախութեամբ և Աստուծուն փառաբանելով.

Երրորդ օրը Դիոկղետիանոսը. հրամայեց նահատակի ոսկորները՝ հանել փոսից և դէն ձը

գել. Հաստատ համոզուած լինելով որ նա այրուած կլինի կրի մէջ։

Գահիճները գնացին և փորեցին կիրը։ Նոքա Գէորգին ողջ և առողջ գտան։

Սուրբը կապանքից արձակուած լուսափայլ կերպարանքով և բազկատարած ձեռքերով փառաբանում էր Աստուծուն Նորա մեծագործութիւնների համար։

Գահիճները և հաւաքուած ժողովուրդը զարմանքից և երկիւղից ապշած՝ միաձայն բացագանչեցին.

— Մեծ է Գէորգի Աստուածը։ Իմանալով այդ բանը կայսրը՝ հրամայեց իր մօտ բերել Սուրբին, և սաստիկ զարմացած ասաց.

— Ո՞րտեղից է այդ քո զօրութիւնը, Գէորգ և ի՞նչպիսի կախարդութեամբ ես կատարում այդպիսի գործեր. ասա ինձ». «Ես կարծում եմ, որ դու, որպէսզի ցոյց տաս քո հիանալի արուեստը՝ ձևացնում ես իբր թէ հաւատում ես խաչեալին. ցանկանալով զարմացնել բոլորին քո թովչութիւններով և դրանցմով մեծ երևալ։

— Ես կարծում էի, ով կայսր, պատասխանում է Սուրբը. թէ դու այլ ևս չպէտք է հայհոյանքներ խօսես Աստուծոյ դէմ. Որը Ամենակարող է. որովհետև ամենայն ինչ հնարա-

ւոր է Նոքա առաջ. Նա հրաշալի կերպով իրան ապաւինողներին փրկում է ամեն տեսակ չարիքից: Բայց դու չար գլխից հրապուրուած՝ այնպիսի մոլորութեան մէջն ես խոռաստզուել, որ իմ Աստուծոյ հրաշքները, որոնք նկատելի են Ձեր աչքերի առաջ, դու անուանում ես թոյլութիւն և կախարդութիւն: Ես ցաւում եմ Ձեր կուրութեան վերայ և անարժան եմ համարում ձեզ իմ պատասխանին:

Այնուհետև Դիոկղետիանոսը հրամայում է բերել երկաթեայ կօշիկներ, որոնց ներսը սուր բևեռներ էին ցցուած:

Դահիճները կասկարմիր կերպով տաքացրին և հագցրին նահատակին: Կայսրի հրամանով դահիճները հարուածում էին Գէորգին և քշում նրան՝ ստիպելով վազել մինչև բանտը.

Դիոկղետիանոսը նայելով վազող նահատակին՝ ծաղրում էր ասելով.

— «Ի՜նչ շուտ շուտ ես գնում, Գէորգ. ինչ հիանալի արագագնաց ես.

Նահատակն ասում էր ինքն իրան — գնա Գէորգ, որպէսզի հասնես. որովհետև քո գնալը աննպատակ չէ:

— Նայիր ինձ, Տէր. աղօթում էր նա. տես իմ տանջանքս և բժշկիր ինձ: Տուր ինձ

համբերութիւն մինչև վերջը. որպէսզի չասի իմ թշնամին. «թէ յաղթեցի նորան»:

Բանտարկեալ Գէորգը ուժասպառ եղաւ. վիրաւորուած ոտների ցաւից սարսափելի տանջանք էր քաշում. բայց նա չէր վհատում և չէր թուլանում: Ամբողջ օրը և ամբողջ գիշերը անդադար աղօթում և փառաբանում էր Աստծուն: Եւ նորա ոտները առողջացան և ինքն էլ առաջուայ նման առողջ էր:

Առաւօտը Գէորգին բերին կայսրի մօտ, ռամկապետական դատարանը, ուր ներկայ էր և սենատը:

Կայսրը տեսնելով նահատակին առողջի նման քայլելիս՝ անսովոր կերպով զարմացաւ: Նա մեղմ և սիրալիր կերպով սկսեց համոզել նրան որ զոհէ աստուածներին:

— Ի՞նչ անմիտ ես դու. պատասխանեց Գէորգը: Դիոկղետիանոսը կատաղի հայեացք ձգեց նրա վրայ և բարձրաձայն գոռաց՝ որպէսզի Գէորգը չշարունակէ իւր խօսքերը. և հրամայեց ներկայ եղողներին հարուածել Սուրբի բերանը: Յետոյ հրամայեց դահիճներին եղան ջլերով անխնայ խփել նորա մարմնին այնքան՝ մինչև որ կոտրները թափուին գետնի վերայ:

Չնայելով որ այդպիսի չարչարանքներ էին տալիս Գէորգին, բայց նրա երեսի պայծառու-

թիւնը անփոփոխ էր. որից զարմացած կայսրը՝ սկսեց ասել.

— Այդ ոչ թէ Գէորգի քաջութիւնից է՝ այլ նրա արուեստն է:

Այն ժամանակ Մաղնետոսը առաջարկեց թագաւորին դիմել Մոգի խորհրդին:

Աթանասիոս անունով կոչուած մի մոգ եկաւ ներկայացաւ կայսրին. և 'ի պատասխան կայսրի հրամանին՝ այսինքն—կործանել, ջարդ ու փշուր անել Գէորգի կախարդութիւնները, նա խոստացաւ ամեն ինչ կատարել միւս օրը: Առաւօտը նահատակին դարձեալ հանեցին բանտից և բերին ռամկապետական դատարանը:

Եկաւ և Աթանասը. և ցոյց տուեց կայսրին և նորա ուղեկիցներին զանազան հմայական թուրջեր, որը ածել էր ամաններում և բերել էր իրա հետ:

— Եթէ կամենում ես ով կայսր, որպէս զի այդ անմիտը հնազանդի քեզ՝ ասաց մոգը, թող այս ամանից խմի. իսկ եթէ կամենում ես որ մեռնի՝—թող խմի միւս ամանից:

Եւ Աթանասը առաջարկեց սուրբին երկու ամանները:

Կայսրը հրամայեց ստիպմամբ խմացնել Գէորգին այդ կախարդական խմիչքը:

Սուրբը խմեց. և դարձեալ անփոփոխ էր

և Հաստատուն իւր Քրիստոնեական Հաւատի մէջ։ Նորա աչքերում փայլում էր ուրախութիւն և նա ծիծաղում էր նրանց դիւական Հրապուրանքի վերայ։

Դիոկղետիանոսի կատաղութիւնը մոլեգնութեան Հասաւ. և նա խմացնել Հրամայեց այն խմիչքը՝ որը լցրած էր սարսափելի թոյնով։

Սուրբը չսպասելով որպէսզի ստիպեն իրան՝ ինքը յօժարակամ վերցրեց ամանը և խմեց մահաբեր թոյնը։ Բայց Աստուծոյ ողորմութեամբ անվնաս մնաց և դերծ մահուանից։

Կայսրը և ամբողջ սենատը զարմացած էին, իսկ մոգը՝ շուարած և տարակուսած դրութեան մէջ էր։

Մի քանի ժամանակից յետոյ կայսրը ասում է նահատակին.

— Մինչև երբ դու պէտք է զարմացնես մեզ Գէորգ, քո գործերով։ Մինչև երբ չես ասելու մեզ ճշմարտութիւնը։ Ասա. որ կախարդութեան միջոցով դու ազատւում ես նահատակութիւնից և մնում ես կենդանի՝ խմելով մահաշունչ թոյնը. ասա՛ մեզ բոլորը. մենք հանդարտութեամբ և յօժարութեամբ կլսենք քեզ։

— Մի կաթիր, ով կայսր, պատասխանում է Գէորգը, թէ մենք ազատւում ենք նահատակութիւնից մարդկային հնարագիտու-

թեամբ. Ո՛չ. այդ բանի մէջ զօրացնում է Քրիստոսի Անունը որ մենք կանչում ենք մեզ օգնականութիւն: Մենք ապաւինելով Քրիստոսին՝ նորա գաղտնի վարդապետութեան համեմատ ոչ մի բանի տեղ չենք դնում մեր չարչարանքները:

— Այդ ինչ գաղտնի վարդապետութիւն է քո Քրիստոսի. հարցրեց Դիոկղետիանոսը:

— Նա ուսուցանում է իւր ծառաներին, ասում է Գէորգը, չվախենալ մարմինը սպանողներից, որոնք չեն կարող հոգին սպանել: Լսիր, ով կայսր, այդ նրա մեզ տուած անսուտ ուխտն է, որը քեզ համառօտ կերպով բացատրում եմ. ով որ ինձ կհաւատայ, ասում էր Նա, այն գործերը՝ որոնք ես գործում եմ՝ և նա՛ կգործէ. (Յովհան. ԺԴ. 19.)

— Այդ նորա ո՞ր գործերն են. հարցնում է Դիոկղետիանոսը:

— Կոյրերը՝ կտեսնեն, պատասխանում է Գէորգը, բորոտները՝ կսրբուեն, կաղերը՝ կմանգան, խուլերը՝ կլսեն, դևերը՝ կհալածուեն, մեռելները՝ յարութիւն կառնեն: Այս և սոցա նմանները Քրիստոսի գործերն են:

— Դու ինչ կասես այս մասին. ասում է կայսրը, դառնալով դէպի Աթանասը:

— Ես զարմանում եմ. պատասխանում է

ՀԱՅԿ-ՍՍՌ Գրադարան
Գոս. Պուբլ. Գրադարան
ՀՍՍՀ-ՍՍՌ
Ա. Մասեաց

նա. ինչպէս դու, իբրև ինքնակալ, կարողանում ես հանդարտութեամբ վերաբերուել դէպի նրա ծաղրածութիւնը և ստախօսութիւնը: Նա իրա յոյսը դնում է խաչեալ և մեռեալ մարդու վրայ: Տեսնում ես, թէ նա ինչպէս անամօթաբար է խօսում: Բայց քանի որ դա այդ ասաց ամենքի առաջ՝ թող յարութիւն տայ մեռելին: Քիչ առաջ իմ մէկ ծանօթս մեռաւ. թող նրան յարութիւն տայ Գէորգը: Այն ժամանակ կիրաւի որ նա յաղթած կլինի մեզ:

Պահլաւանը մեծ էր և գտանւում էր բամկապետական դատարանից կէս ասպարէզի չափ հեռաւորութեան վերայ: Որովհետև նոյն դատարանը գտանւում էր քաղաքային դռներին կից գտնուած թատրոնի մօտ:

Նա քաղաքից դուրսն էր. որովհետև հելլենացոց մէջ կար սովորութիւն թաղել մեռելներին քաղաքից դուրս:

Կայսրը հրամայեց Գէորգին յարուցանել մեռեալը, իբրև իւր Աստծոյ զօրութեան մի ապացոյց: Իսկ Պաղնենտիոս բղեշխը խնդրեց թագաւորից նահատակի ձեռքի և ոտքի շղթայակապը լուծել:

— Իմ աստուածը, ասաց նահատակը, զօրաւոր է ինձնով — իւր ծառայով. յարութիւն կտայ այն մեռեալին: Բայց ձեր միտքը խաւա-

բով է հրապուրուած. և այդ պատճառով չէք կարողանում ըմբռնել ճշմարտութիւնը: Սակայն ներկայ ժողովրդի համար իմ Աստուածը կանի այն, որ դուք փորձելով խնդրում էք, որպէս զի դուք չհաշուէք իբրև խարդախութիւն: Ես բոլոր շրջապատողների առաջ բարձրաձայն կը կանչեմ իմ Աստծուն:

Գէորգը ծնկաչոք և երկար ժամանակ աղօթում էր արտասուախառն: Յետոյ վերկացաւ և բարձրաձայն աղօթում էր ասելով.

— Աստուած յաւիտենից. Աստուած ողորմած. Աստուած Ամենահզօր և Ամենակարող. Դու չես թողնում քեզ, ով Տէր Յիսուս Քրիստոս, ապաւինողներին ամօթահար վիճակի մէջ. Լսիր ինձ այս ժամին, քո հնազանդ ծառային, և ցոյց տուր այս նենգամիտ ազգին իրանց խնդրած նշանը և տուր յարութիւն այս դագաղում պառկած մեռեալին, 'ի նախատինս քեզ չճանաչողներին. Քո և Քո Հօր Ամենասուրբ Հոգւոյ փառքի համար: Ո՜վ Քրիստոս Աստուած, Տէր Տիեզերքի, ցոյց տուր ներկայ եղողներին՝ որ Դու ես Միակ Աստուածը ամբողջ երկրիս վերայ. թող ճանաչեն Քեզ իբրև Ամենահզօր, որ ամենայն ինչ հնազանդ է քո կամքին և Քո փառքը յաւիտեան կայ:

Հազիւ թէ արտասանեց Գէորգը այս վեր-

ջին խօսքերը՝ և ահա բարձրացաւ սարսափելի աղմուկ և երկրաշարժ։ Այնպէս որ ամենքը ա-հաբեկուած էին։

Այն ժամանակ դագաղը երդիկից վայր ընկաւ գետնի վրայ և բացուեցաւ։

Մեռեալը կենդանի կանգնեց և դուրս եկաւ դագաղից բոլորի աչքի առաջ. որոնք երկիւղից անզգայացած էին։

Այնուհետև ժողովրդի մէջ աղմուկ և ձայներ բարձրացան։ Զատերը ուրախանում էին և Քրիստոսին փառաբանում էին ինչպէս մեծ Աստուծոյ։ Իսկ կայսրը և նորա հետ եղողները, որոնք լցուած էին երկիւղով և անհաւատութեամբ, սկզբում ասում էին թէ Գէորգը մեծ մոգ է, ոչ թէ մեռածին՝ այլ թէ տեսիլ դուրս բերեց դագաղից, ժողովրդին հրապուրելու համար. յետոյ տեսնելով յիրաւի յարութիւն առած մարդուն՝ որը կանչում էր Քրիստոսի Անունը և խոնարհուեց ու չոքեց Գէորգի առաջ։ Բոլորը տարակուսուած շուարել էին և չիմանալով ինչ անել՝ լռել էին։

Մոգ Աթանասն ընկաւ Գէորգի ոտները և խոստովանելով Քրիստոսին իբրև Ամենահզօր Աստուած, խնդրեց նահատակին՝ ներել իրան, իւր տգիտաբար արած չարութեան համար։

Երկար ժամանակ անցնելուց յետոյ Դիո-

կղեսիանոսը հրամայեց ժողովրդին հանդարտուել և ասում էր նոցա թէ Ամանասը թոյն չտուեց Գէորգին. և թէ այդ մեռեալը կենդանի մարդ էր, և թէ Գէորգի կատարած բոլոր հրաշքները միայն նորա խարդախութեան արուեստն էր։

Վերջացնելով ժողովրդին արտասանած իւր ճառը՝ կայսրը հրամայեց առանց որևէ հարցմունքների՝ գլխատել Ամանասին և մեռածներից յարութիւն առած մարդուն։

Հրամայեց որ Գէորգի ոտքերն ու ձեռքերը շղթայեն և բանդարկեն մինչև այն ժամանակ, երբ ինքը ազատ կլինի ժողովրդական գործերից և կմտածի—թէ ինչպէս պէտք է վարուել նրա հետ։

Սուրբը ուրախանում և փառաբանում էր Աստուծուն։

Բոլորը, որոնք հաւատացին Քրիստոսին Գէորգի ցոյց տուած հրաշքների միջոցաւ, ոսկի էին տալիս պահապանին և յաճախում էին նրա մօտ բանտը։

Նա յորդորում էր նրանց հաստատ մնալ հաւատի մէջ և ոգևորում էր. այլ և ամրապնդում էր նոցա մէջ այդ հաւատը։ Նրան բանտումը յաճախողներից շատերի մէջ կար մի մարդ, անունով Գղիւկեր, որը մի հասարակ հո-

զաղոլծ էր։ Մէկ անգամ իւր ցուլը ընկել էր սարից խիտ անտառի մէջ, չարդուել էր և սատկել։

Գղիւկերը գալով Սուրբի մօտ, դանգատուեց իւր ցուլի մասին։

Հանդարտ ժպիտով ասաց նրան Գէորգը.

— Գնա՛ եղբայր և ուրախացիր. իմ Քրիստոսը կենդանացրել է քո ցուլին։

Հողագործը առանց կասկածի հաւատաց Սուրբի խօսքերին, գնաց և Գէորգի խօսքով գտաւ իւր ցուլին կենդանի։ Եւ իսկոյն անյապաղ վերադարձաւ նահատակի մօտ. և յետոյ քաղաքի մէջտեղը կանգնեց սկսաց բացականչել բարձր ձայնով.

— Ճշմարիտ որ Մեծ է Քրիստոնեաների Աստուածը։

Այնտեղ պատահած զինուորները ձերբակալեցին նրան. և նրա մասին յայտնեցին կայսրին։

Դիոկղետիանոսը Կլամալից քաղաքից ղուրս տանել և գլխատել նրան։

Գղիւկերը ուրախանում էր. զինուորներից առաջ էր ընկնում և բարձր կանչում էր Քրիստոս Աստուն, խնդրելով նրան՝ որպէսզի իւր արիւնի հոսումը իբրև մկրտութիւն համարէ իւր համար։

Սենատի անդամներից մի քանիսը յայտնեցին Գիսկղեսիանոսին՝ թէ Գէորգը նստած բանտումը՝ ժողովրդին գայթնում է դէպի խաչեալը։

Կայսրը հրամայեց Բգեշիի օգնականին առաւօտը ամկապետական ատեան կոչել Գէորգի մասին դատավճիռ կազմելու համար։ Այդ գիշեր գէորգը աղօթում էր բանտումը և քնեց։ Նա տեսիլ տեսաւ որ երևում էր իրան Աստուած, և բարձրացնելով իրան՝ գրկում էր ու համբուրում։

— Մի վախենար. այլ վստահ եղիր. ասաց Նա Գէորգին. դնելով գլխի վրայ պսակ։ Դու ինձ հետ կթագաւորես։ Մի յուսահատուիր. շուտով Ինձ մօտ գալով՝ կտանաս քեզ համար պատրաստուածը։

Գէորգը զարթելով՝ ուրախութեամբ փառաբանում էր Աստուծուն։ Նա կանչեց բանտապետին և խնդրեց նրան՝ թոյլ տալ իրա մօտ իւր ծառային։ Պահապանը թերում էր ծառային, այլ ասանց բացակայելու միշտ գրտնում էր բանտի մօտ. և սուրբի բոլոր գործքերն ու խօսքերը մատդրութեամբ գրի էր անցկացնում։

Դատան մանելով բանտը՝ երկրպագեց իւր

պարոնին, որը շղթայահարուած նստած էր, և ընկնելով նրա ոտները՝ լալիս էր։

Գէորգը վերկացրեց և յորդորեց նրան բարեհոգի լինել. և պատմեց նրան իւր տեսիլքի մասին։

— Որդեակ. ասաց նրան Գէորգը. շուտով Աստուած կ'կանչի ինձ իրա մօտ. իսկ դու, իմ վախճանից յետոյ նահատակական չարչարանքներից առաջ իմ կտակի զօրութեամբ, կվերցնես իմ նուաստ մարմինը Աստուծոյ օգնութեամբ կտանես Պաղեստին մեր տունը և ինչ որ կտակել եմ բոլորը կ'կատարես. և դու ինքդ էլ հաստատ կպահես հաւատդ, որ 'ի Քրիստոս։

Սա խոստացաւ կատարել բոլորը և դառնապէս լաց էր լինում։

Գէորգը փաթաթուեց նրան և տալով վերջին համբոյրը՝ արձակեց։

Առաւօտը Գէորգին բերին կայսրի մօտ և Դիոկղետիանոսը. սկսեց նրան համոզել և քաղցրութեամբ խոստացաւ ամեն տեսակ պատիւներ։

Գէորգը կեղծօրէն ասաց—թէ կամենում է զոհ մատուցանել աստուածներին։

Դիոկղետիանոսը ուրախացած՝ սենատի անդամներով և ժողովուրդով գնաց Ապոլոնի տաճարը, տանելով իր հետ Գէորգին մեծաշուք պատուով։

Երբ Գէորգը տաճար եկաւ՝ խաչանիշ արեց կուռքերի վրայ և նոքա յանկարծ ընկան գետնի վրայ և փշրուեցին։

Քուրմերը և ժողովրդից շատերը յարձակուեցան Գէորգի վերայ և պահանջում էին՝ որ կայսրը հրամայէ սպանել նրան։

Դիոկղետիանոսը կատաղաբար հրամայեց գլխատել Գէորգին։

Զինուորները կապեցին նահատակին և տարան քաղաքից դուրս։

Մօտենալով Գէորգը այն տեղը, ուր պիտի գլխատուէր, սկսեց աղօթել Աստուծուն.—Օրհնեա՛լ ես Տէր Աստուած իմ. որ ազատեցիր իմ հոգին, ինչպէս թռչունին վանդակից։ Լսի՛ր ինձ և այժմ. Տէր—թագաւոր. և ներկայացիր ինձ՝ քո ծառայիդ, այս վերջին ժամին. և ազատիր իմ հոգին—որոգայթից, օդային իշխանից և նորա խաւար հոգիներից։ Տէր Աստուած, իմ դէմ մեղանչողների գործը մի՛ համարիր 'ի մեզս. այլ ներելով նրանց տգիտութիւնը՝ թողութիւն տուր. և տուր նրանց քո սէրը, որպէս զի նոքա ճանաչելով քեզ՝ մաս ստանան քո արքայութեան մէջ քո ընտրեալներիդ հետ։ Ընդունիր, Տէր իմ, միշտ քեզ կամակատար հոգիս, առ ոչինչ համարելով իմ բոլոր գիտութեամբ և անգիտութեամբ կատար-

ուած մեղքերը։ Յիշիր, Տէր թագաւոր, և այն բոլորին՝ որոնք Քո Անունն են կանչում. որովհետև Օրհնեալ ես և փառաւորեալ յաւիտեանս յաւիտենից.

Գէորգը ուրախութեամբ խոնարհեց իւր գլուխը սրի առաջ. գլխատեցաւ Ապրիլի 23-ին. Քրիստոսի 303 թուին։

Նրա մարմինը թաղեցին Պաղեստինում։ Ուր Ուստեանում մեծ կայսեր օրօք կառուցուեցաւ 'ի պատիւ ս. Գէորգի հայակապ եկեղեցի որի աւերակները մինչև այժմ կան։ Մեծ նահատակի գլուխը գտնուում է Հռոմում, իւր Անուամբ շինուած եկեղեցու մէջ։

II

ՄԵԾ ՆԱՀԱՏԱԿ ՍՈՒՐԲ ԳԷՈՐԳԻ ՀՐԱՇԱԳՈՐԾՈՒԹԻՒՆՆԵՐԸ.

Ա.

Այրի կնոջ նուիրաբերութիւնը։ Պաղեստինում, Լեմլէ *) քաղաքում կառուցուում էր մի քարաշէն տաճար բայց որովհետև այդ տեղ չկային մեծ քարեր տաճարի սիւնների համար, որոնք պիտի պահպանէին շէնքը. ուստի այդ

*) Մեծ նահատակ Սուրբ Գէորգի անունով։

կիւնները գնում էին հեռու երկիրներում և բերում էին այստեղ ծովով։

Շատ բարեպաշտ քաղաքացիներ ուղևորում էին դանազան երկրներ և գնում էին տաճարի համար սիւներ։ Մի բարեպաշտ այրի ևս, դէպի մեծ նահատակ Սուրբ Գէորգը ունեցած ջերմեռանդութիւնից ոտիպուած ցանկացաւ ինքն ևս, իւր չքաւորութեան համեմատ, գնել այդպիսի մի սիւն. և այդ պատճառով ճանապարհ ընկաւ դէպի այնտեղ, որտեղից պէտք է գնէր։ Երբ գնեց յիշեալ սիւնը, բերեց ծովի ափը, ուր որ Ռեմլէ քաղաքի հարուստ քաղաքապետը դարսում էր նաւի վերայ մի քանի սիւներ, որ ինքը գնել էր նոյն նպատակով։

Ռեմլէ— շատ կարելի է առաջուայ Երիմաթէմ քաղաքն է, որը գտնւում է Յոպպէից Երուսաղէմ տանող ճանապարհի վրայ։ Մեծ նահատակ սուրբ Գէորգի անուամբ կառուցած եկեղեցին վերանորոգուած է 1808 թուին. ուր ցոյց են տալիս մարմարեայ սեան բեկորներ, որոնց մասին այստեղ խօսւում է։

Այրին շատ էր աղերսում քաղաքապետին, որ իւր սիւնն ևս միւս սիւնների հետ դարսի նաւի վրայ, և տանի նահատակի անուան կառուցուելիք տաճարի համար բայց նա չլսեց նրա խնդիրքը. և դարսելով միայն իւր սիւնե-

ը՝ սկսեց նաւարկութիւնը։ Այն ժամանակ այրին ընկաւ գետնի վերայ, սկսեց լաց լինել դառնապէս կանչում էր իւր աղօթքում Մեծ Նահատակ սուրբ Գէորգին, որպէսզի նա օգնէ մի կերպ հասցնել ու այդ սիւնը Բեմլէ քաղաքը։

Այդպիսի վշտի և արտասուքի մէջ նրա քունը տարաւ և նա քնեց, և տեսաւ երազում Մեծ նահատակ սուրբ Գէորգին զօրապետի պատկերով, ձիու վերայ նստած, որը ներկայացաւ իրան, բարձրացրեց գետնից և հարցրեց. «Սա ինձ. ինչի՞ համար ես այդպէս վշտանում»։ Նա պատմեց նրան իւր վիշտը. Գէորգը իջնելով ձիուց, հարցրեց նրան. «Ո՞ւր ես կամենում դնել սիւնդ»։ «Եկեղեցու աջ կողմը» պատասխանեց այրին։

Այն ժամանակ Գէորգը մատով մակագրեց սիւնի վերայ հետևեալ խօսքերը. «Այրու այս սիւնը պէտք է դրուի եկեղեցու աջ կողմը, առաջին սիւնից յետոյ. որպէսզի սա լինի երկրորդը»։

Երբ աւարտեց մակագրութիւնը, նա ասաց այրուն. «Ոգնիր ինձ»։

Երկուսով բարձրացրին այն քարը, որը թեթև երևաց և նետեցին ծովը։

Ահա ինչ տեսաւ այրին երազում։

Զարթնելով այրին՝ այլ ևս չտեսաւ իւր սիւնը առաջուայ տեղում. և ապաւինելով Աս-

տուծուն և նորայ ծառայ ս. Գէորգին՝ վերադարձաւ տուն։ Բայց նորա վերադառնալուց և քաղաքապետի սիւները տանող նաւի տեղ հասնելուց առաջ մի օր առաւօտ այրու սիւնը արդէն Բիմլէի նաւահանգստի վրայ երևաց։

Երբ քաղաքապետը իւր սիւներով հասաւ Բեմլէ, շատ զարմացաւ, տեսնելով նաւահանգիստում այրու սիւնը Ս. Գէորգի ձեռքով մակագրուած. կարծես թէ փափուկ կաւի վրայ լինէր գրուած։

Այս դիպուածի շնորհիւ ճանաչելով Մեծ Նահատակի հրաշագործութիւնը և համոզուելով իւր յանցանքի մէջ՝ զղջում էր, թէ ինչու մերժեց այրու խնդիրքը. և այդ պատճառով ջերմեռանդօրէն աղօթում էր Ս. Գէորգին ներել իւր մեղքերը. և արդարև նա տեսիլքի մէջ ստացաւ իրան երևացող Ս. Գէորգից իւր մեղքերին թողութիւն։

Այրու սիւնը դրուեցաւ այնտեղ, ուր որ հրամայուած էր. 'ի յիշատակ նուիրաբերողի. և 'ի նշան այն հրաշագործութեան, որը կատարուեցաւ Ս. Նահատակի. և մանաւանդ 'ի փառս մեր Տէր Յիսուս Քրիստոսի Մեծամեծ հրաշքների։

Բ.

Սուրբ Գէորգի հրաշագործ պատկերը։ Սարակինոսների Սիրեան տիրելուց և իրանց երկիրներին միացնելուց մի քանի տարի յետոյ, միևնոյն Ռեմլէ քաղաքում և Մեծ Նահատակ Սուրբ Գէորգի անուամբ կառուցուած միևնոյն եկեղեցում կատարուեցաւ հետևեալ հրաշքը։

Ժամերգութեան ժամանակ մի քանի Սարակինոսներ մտնում են եկեղեցի։ Նոցանից մէկը, որ մի դիտնական Սարակինոս էր տեսնելով Ս. Գէորգի պատկերը և նոյն պատկերի առաջ աղօթող քահանային, դառնալով դէպի իւր բարեկամները ասում է իրանց լեզուով.

— Տեսնում էք այս անմիտ մարդուն թէ ինչ է անում. տախտակին է աղօթում... բերէք ինձ աղեղ և նետ. ես կնետեմ այս տախտակի վերայ։

Երբ աղեղը բերին, կանգնեց բոլորի յետևը, ձգեց աղեղը և թողեց նետը Ս. Գէորգի պատկերի վերայ։ Բայց նետը ոչ թէ դէպի պատկերը թռաւ, այլ դէպի վեր, և ընկնելով այնտեղից՝ ցցուեց իւր ձեռքի մէջ։

Սարակինոսը անյապաղ դուրս եկաւ տաճարից և վերադարձնելով տունն՝ սաստիկ ցաւը զգում ձեռքի մէջ։ Ցաւը սաստկանում էր.

նա սկսեց դոռալ, հառաչել իբրև յետին շնչի մի վիրաւոր։

Իւր ստրկուհիների թւում կային մի քանի Քրիստոնեայ կանայք. կանչեց նրանց և ասաց. — Ես ձեր Ս. Գէորգի անունով կառուցած Աստուծոյ տաճարումն էի. և ուզում էի նետել նրա պատկերը։ Բայց իմ վատ նետելուց՝ յետ մղուած նետը վիրաւորեց ձեռքս և ահա մեռնում եմ անտանելի ցաւից։

Նոքա ասացին նրան։

— Մի՞թէ կարծում ես թէ, լաւ բան արեցիր. բարձրացնելով ձեռքդ Ս. Նահատակի պատկերի վերայ։

Սարակինոսը ասաց.

— Մի՞թէ այդ Ս. պատկերը ունի այդպիսի զօրութիւն. և նա՞ պատճառեց ինձ այս ցաւը, որից այժմ տանջւում եմ ես։

Ստրուկուհիները պատասխանեցին.

— Մենք ուսած չենք. և չենք իմանում ինչ պատասխանենք. կանչիր քահանային. նա կբացատրէ քեզ այն՝ ինչի մասին մեզ հարցնում ես։

Բարբարոսը լսեց իւր ստրուկուհիների խորհուրդը՝ կանչելով քահանային՝ ասաց նրան.

— Ուզում եմ իմանալ, ինչ զօրութիւն ունի այն տախտակը կամ Ս. Պատկերը, որին դու երկրպագում էիր։

Քահանան պատասխանեց.

— Ես տախտակին չէի երկրպագում. այլ իմ Աստուծուն, Որը ամենքի ստեղծողն է. իսկ տախտակի վրայ նկարուած Մեծ Նահատակ Սուրբ Գէորգին խնդրում էի միջնորդել ինձ համար Աստուծոյ առաջ։

Բարբարոսն ասաց.

— Ո՞վ է Գէորգը. եթէ ոչ ձեր Աստուածը։

Քահանան պատասխանում է.

— Դա Աստուած չէ. այլ ծառայ է Աստուծոյ և մեր Տէր Յիսուս Քրիստոսի։ Նա մեզ նման մարդ էր, որը շատ նահատակութիւն կրեց կրապաշտներից, որոնք ստիպում էին նրան ուրանալ Քրիստոսին. բայց չնայելով այդ ամենին՝ նա արիաբար համբերեց և փառաւոր կերպով Յիսուսի անունը դաւանելով՝ Աստուծոյ շնորք ստացաւ հրաշքներ գործելու և նշաններ ցոյց տալու։ Սուրբին սիրելով մենք՝ յարգում ենք նորա պատկերը. և իբրև թէ նորան մեզ ներկայ տեսնելով երկրպագում և համբուրում ենք նորան. ինչպէս և դու քո սիրելի ծնողների և եղբայրների մահուանից յետոյ վարում ես նրանց հագուստների հետ դարսում ես առաջդ, լաց ես լինում, համբուրում ես. իբր թէ նրանց ես ներկայացնում քո աչքի առաջ։ Այդպէս և մենք ենք յարգում սուրբերի պատ-

կերները. ոչ թէ իբրև Աստուծուն՝ այլ իբրև Աստուծոյ ներկայացուցիչների, որոնք իրենց պատկերներով հրաշքներ են գործում, ինչպէս և քեզ, որ յանդգնեցիր Նահատակի պատկերի վերայ նետաձիգ լինել. և ահա պատահեցաւ քեզ ճանաչել նրա զօրութիւնը, ի խրատ ուրիշներին:

Այս լսելով Սարակինոսը՝ հարցրեց.

— Ի՞նչ անեմ: Տեսնում ես որ իմ ձեռքը ուռել է. տանջանքներս անտանելի են, և ես զգում եմ որ մահս մօտ է:

Քահանան պատասխանեց նրան.

— Եթէ կամենում ես ապրել և առողջ լինել՝ հրամայիր բերել քեզ մօտ Մեծ Նահատակ Սուրբ Գէորգի պատկերը, դիր նրան քո անկողնի վրայ և վառիր նորա առաջ ձեթով լիք մի կանթեղ ամբողջ գիշերը: Առաւօտը վերցրու ձէթը կանթեղից, քսիր հիւանդ ձեռքիդ. հաւատա որ կառողջանաս. և կլինի քո հաւատովը: Սարակինոսը խնդրեց քահանային բերել Ս. Գէորգի պատկերը. որը ընդունեց ուրախութեամբ և կատարեց այն ամենը ինչ որ խրատեց նրան քահանան: Եւ երբ առաւօտը քսեց իւր ձեռքին կանթեղի ձեթը, իսկոյն ցաւը անհետացաւ և նրա ձեռքը բժշկուեց:

Զարմացած և ուրախացած այդ հրաշքով՝ նա հարցրեց քահանային.

— Գրած է արդեօք ձեր գրքերում որև է բան Ս. Գէորգի մասին:

Քահանան բերեց Ս. Գէորգի կենսագրութիւնը և նահատակութիւնը, և կարդաց նը-ցրան, նա լսում էր ուշադրութեամբ, բռնելով ձեռքում Ս. Նահատակի պատկերը և դառնալով Սուրբի պատկերին՝ իբրև կենդանի մարդու, ասում էր արտասուքը աչքերին. — «Ո՜վ Ս. Գէորգ. Դու մատաղահաս էիր՝ բայց խելացի էիր. իսկ ես թէև ծեր եմ՝ բայց անմիտ եմ: Դու մատաղահաս էիր և հաճելի Աստուծուն, իսկ ես ծերացել եմ և չեմ ճանաչում Աստուծուն: Աղօթիր ուրեմն ինձ համար քո Աստուծուն. և ես էլ կլինեմ նորա ծառան:

Յետոյ ընկնելով քահանայի ոտքերը, խնդրում էր արժանացնել Ս. Մկրտութեանը:

Քահանան չէր համաձայնւում, վախենալով Սարակինոսներից, բայց տեսնելով նրա հաւատը և ջերմեռանդ խնդիրքը՝ գլուխը գազանի կերպով մկրտեց նորան: Առաւոտեան դէմ նոր մկրտեալը դուրս եկաւ տանից և քաղաքի մէջտեղը մի յայտնի տեղ կանգնելով՝ սկսեց համարձակ և բարձր քարոզել Քրիստոսին, իբրև

ճշմարիտ Աստուծոյ, և նզովելով Սարակինոս-ների հաւատը։

Իսկոյն վազեցին դէպի նա շատ Սարա-կինոսներ, որոնք բարկութեամբ և կատաղու-թեամբ լցուած՝ յարձակուեցան նրա վրայ վայ-րենի դազանների նման և մաս-մաս թրատեցին նրան։

Այսպէս՝ նա թէև կարճատև ժամանակով խոստովանեց Քրիստոնէական հաւատը, սակայն փառաւոր յաղթութիւն տարաւ և ընդունեց Նահատակական պսակը Մեծ Նահատակ Ս. Գէ-որգի օգնութեամբ։

Գ.

ՊԱՏԱՆՈՒ ԱՋԱՏՈՒԹԻՒՆԸ ԳԵՐՈՒԹԻՒՆԻՑ.

Լիսբոս կղզու վրայ, Միտիլին քաղաքում շինուած էր մեծ և հոյակապ եկեղեցի Մեծ Նա-հատակ Սուրբ Գէորգի անունով։ Այդ կղզու բնա-կիչները իւրաքանչիւր տարի սովորութիւն ու-նէին հաւաքուել միևնոյն եկեղեցին և հանդի-սաւոր կերպով մօտ կատարել։ Լիսբոսը գտնուում է փոքր Ասիայի Եգեյեան, ըստ Յունաց ներկայ Սպիտակ ծովի ափերի մօտ. Միտելին քաղաքը մի ժամանակ այդ կղզու մայրաքաղաքն էր և

ընկնում էր նորա հարաւային մասերումը. այդ քաղաքի անունով է կոչւում կղզու այժմեան Միտելին Յունական անունը։ Տօնախմբութեան օրը։ Այդ իմանալով Կրէտէի արաբները մի երեկոյ յարձակուեցին այդ տեղի վրայ։

Եկեղեցու դուրս գտնուած մարդիկ սկսան փախչել և այդ միջոցով ազատուեցին գերութիւնից. իսկ եկեղեցում գտնուողներին Արաբները բռնեցին կապեցին և գերի տարան։

Գերիների մէջ կար մէկ պատանի, որին տարել էին Կրէտէ և ընծայել Արաբների էմիրին։

Հետևեալ տարին, միևնոյն տօնի օրը այդ պատանու ծնողները չնայելով որ զրկուեցին զաւակից՝ բայց չփոխեցին իրանց սովորութիւնը որ ամեն տարի գալիս էին Սուրբ Նահատակի տօնին և ճոխ ճաշկերոյթ էին պատրաստում 'ի պատիւ յիշատակի Սրբոյն Գէորգայ։

Երբ հրաւիրեալ հիւրերը նստեցին ճաշի՝ գերի պատանու մայրը գնաց եկեղեցի և վայր ընկնելով գետնին՝ արտասուքով խնդրում էր Սուրբին ազատել իւր որդուն գերութիւնից։ Եւ արագահաս օգնականը լսեց նորա խնդիրքը։

Երբ աղօթելուց յետոյ, այդ կինը վերադարձաւ հիւրերի մօտ, նրա ամուսինը ամենից առաջ յիշելով Մեծ նահատակ Սուրբ Գէորգի անունը և փառաւորելով նրա օգնութիւնը և

պաշտպանութիւնը՝ սկսեց մեծարել Հիւրերին, իսկ ծառաները պատրաստում էին գինի ածել. նոյն բոպէին և նրանց որդին, Սուրբ Գէորգի օգնութեամբ գերութիւնից ազատուած՝ ներկայացաւ նրանց, բռնած ունելով ձեռքին գինով լիք ապակեայ անօթը, որը տուեց մօրը:

Այս դէպքի հետ միաժամանակ մատաղահաս գերին Կրէտէում ծառայում էր Արաբացւոց Էմիրին ճաշի ժամանակ. նա ածեց գինին անօթում և ուզում էր պարոնին տալ, երբ յանկարծ գտնուեց Մետելեն քաղաքում գինով լիք անօթով:

Ճաշին բոլոր ներկայ եղողները այդ երևոյթով շուարած՝ հարցնում էին նրան «Ո՞ւր էիր, որտեղից եկար և ինչ կերպով եռևեցար մեզ մօտ:

Նա պատասխանեց.

— Այս անօթում ես ածեցի գինի որպէս զի տամ Էմիրին, և յանկարծ տեսայ, որ մի լուսաւոր ձիաւոր մարդ ինձ յափշտակեց այնտեղից, նստացրեց ինձ իրա հետ ձիու վրայ: Ես բռնած ունէի մէկ ձեռքով անօթը, իսկ միւսով նրա գօտիկը. և ահա գտնուեցայ այստեղ. ինչպէս տեսնում էք:

Այս լսելով՝ բոլորն էլ ահաբեկուեցան և զարմացան այդ սքանչելի հրաշքի վերայ. վեր-

կացան, փառաբանեցին Աստծուն և նրա կամակատար Սուրբ Գէորգ Մեծ Նահատակին։

Գ.

ՔԱՀԱՆԱՅԻ ՈՐԴՈՒ ԳԵՐՈՒԹԻՒՆԻՑ ԱՌԱՏՈՒՄԸ։

Կօսմա վարդապետը պատմում է հետևեալ հրաշքը։

Բիւզանդացւոց Վասիլ Կայսրի թագաւորութեան ժամանակ երիտասարդութեան հասակում ծառայում էր զօրապետի մօտ, որը ուղարկուած էր Վասիլ Կայսրից Կիպրոս կղզին։

Գալով այդտեղ՝ մենք լսեցինք Մեծ Նահատակ Սուրբ Գէորգի մի հրաշքի մասին, որը պատահել էր նրա անուամբ կառուցած եկեղեցում իւր տօնի օրը։

Այստեղի բնակիչները պատմում էին թէմի քահանայի որդի, որը ծառայում էր Սուրբ Գէորգի անուամբ կառուցած եկեղեցում, գերի է ընկնում Սարակինոսների ձեռքը, իսկ այժմ Մեծ Նահատակի նոյն իսկ տօնին յանկարծ յայտնւում է իւր հօր մօտ եկեղեցում պատարագի ժամանակ։

Մեր զօրապետը կանչում է իր մօտ քահանային և նորա որդուն, և հարցնում է վեր-

ջինին՝ թէ ինչպէս յետ դարձաւ նա Սարակի-նոսներից։

Պատանին պատմեց հետևեալը.

— Ստուծոյ կամեցողութեամբ աղատեց ինձ Ս. Գէորգը. ես չեմ իմանում թէ ինչ կերպ գտնուեցայ այստեղ. միայն այն գիտեմ որ ես գերի էի վերցրած սորանից երեք տարի առաջ։ Իմ հայրս ծովով ուղարկեց ինձ ուրիշ մարդկանց հետ միասին առուտուրի համար։ Մեզ վերայ յարձակուեցան Արաբները, բոլորիս էլ գերի վերցրին և տարան Պաղեստին։ Ես այնտեղ երեք տարի ծառայում էի մի արաբի, և ահա տասն և ութ օր սորանից առաջ հրամայեց ինձ տանել իւր անկողինը հասարակաց բաղնիքը, ուր որ ինքը պէտք է լողանար։ Լողանալու ժամանակ նա հարցրեց ինձ. «բերեցիր ինձ օպսիմա» *)։ Ես պատասխանեցի. «չեմ բերել պարոն»։ Նա բռնեց ինձ և ուզում էր ծեծել. ես վազեցի տուն տիկնոջ մօտ և վերցնելով նրանից խմիչքը և սամիթը՝ շտապով վերադարձայ բաղնիք, պարոնիս մօտ։ Ճանապարհը անցնում էր Քրիստոնեաների բնակարանի բակի մօտով, ուր եկեղեցի կար. և այդ ժամանակ սուրբը պատարագ էր մատուցում։ Ես լը-

*) Օպսիմա գործ են ածում Սարակինոսները (Արաբները) իբրև խմիչք։

սեցի թէ ինչպէս էին երգում օրհներգները 'ի պատիւ Ս. Գէորգի։ Այդ օրը Սուրբ Գէորգի յիշատակն էր։ Լսելով այդ օրհներգը՝ ես դառնապէս լացի և ասացի. Ո՛վ Սուրբ Գէորգ Մեծ նահատակ. Մինթէ հաճելի չէ Աստուծուն և Քեզ իմ հօր՝ Քո ծառայի ոչ մի պաղատանքը. ինչո՞ւ ուշադրութիւն չես դարձնում նրա արտասուքներին և աղօթքներին, որ մատուցանում է նա Քեզ ինձ համար Քո տաճարում. որպէսզի դու ազատես ինձ զերութիւնից և ստրկական վիճակից։

Այս խօսքերն ասելով՝ ես եկայ բաղանիք։ Պարոնս տեսնելով ինձ արտասուոտ աչքերով՝ աւելի ևս բարկացաւ ինձ վերայ և սկսեց հայհոյել ու ասել «ածա»։ Ես ածեցի խմիչքը ապակեայ անօթի մէջ։ Պարոնս էլի ասաց. «եռան ջուր աւելացրու»։ Երբ ես վերցրի սամիթը որպէսզի ածեմ ամանում եռան ջուրը, այլ ևս չտեսայ պարոնիս և դուռացի. պարոն չեմ տեսնում քեզ։ Եւ այնուհետև բարձրացրեց ինձ զետնից մի անտեսանելի զօրութիւն. ես չէի լսում պարոնիս խօսքերը. այլ լսում էի հետևեալ Օրհներգը — «Միայն Սուրբ, Միայն Տէր Յիսուս Քրիստոս 'ի փառս Աստուծոյ Հօր. Ամէն»։ Այստեղ տեսայ որ ես դառնում եմ բէմի վերայ հօրս առջև, որը ունէր բռնած Ս.

Սկին և ասում էր ժամկոչներին. «Տուէք ինձ եռան ջուրը»: Եւ ահա ես կանգնած նորա առաջ սամիթով՝ ուզում է ածել եռան ջուրը Սուրբ սկիհում, ինչպէս որ բաղնիսում սարակինոսի առաջ էի զտանում բռնած ունենալով մէկ ձեռքում անօթը օպսիմով. իսկ միւս ձեռքում սամիթը եռան ջրով: Այդպէս անսպասելի կերպով զտանուեցայ բէմի վերայ կանգնելով հօրս առաջ: Նա նայելով ինձ վերայ՝ հարցրեց ժամկոչներին. «ով է այս պատանին». նոքա պատասխանեցին զարմանքով. «Չգիտենք ով է և որտեղից»: Մթթէ չես ճանաչում ինձ, հայր իմ. հարցրի ես նրան: Ես քո Թէոփիլէ որդին եմ: «Իսկ ինչու համար այս սամիթը և անօթը քո ձեռքումն են. և ինչ կայ նոցա մէջ». հարցրեց հայրս: Ես ասացի. «այս օպսիմ է, իսկ այս՝ եռան ջուր. ես Երուսաղէմի մօտ, իմ պարոնի հետ բաղնիսում էի. և երբ կամենում էի ածել այս խմիչքը և տալ նրան. յանկարծ զտնուեցայ այստեղ եկեղեցում քեզ մօտ. Հայրս զողաց սարսափից և ուրախութիւնից. և շփոթութեան մէջ քիչ էր մնում վայր ձգէր Ս. Սկիհը: Իսկ ես իսկոյն ձգելով անօթը և սամիթը դետնի վրայ և բռնելով Ս. Սկիհը ասացի. մի շփոթուիր հայր. աւարտիր պատարագը: Դնելով Ս. Սկիհը Ս. Սեղանի վրայ և

բարձրացնելով ձեռքերը՝ հայրս գովաբանեց Աստուծուն և փառաբանեց Ս. Գէորգին։ Անօթը և սամիթը, որոնց ես վայր ձգեցի մարմարի վրայ, ոչ թէ չՁարդուեցին՝ այլ նոցա մէջ եղածն անգամ չթափուեց։

Վերջացնելով պատարագը՝ հայրս գրկեց ինձ, համբուրեց արտասուելով և մենք գնացինք տուն։ Բոլոր ազգականները և դրացիները լսելով իմ մասին՝ հաւաքուեցին մեզ մօտ և տեսնելով ինձ՝ ուրախացած փառաբանեցին Աստուծուն և նրա ծառայ Ս. Գէորգին, որը ազատել էր ինձ սարակինոսներից մի ակնթարթում»։

Ձօրապետը և նրա հետ բոլոր եղողները լսելով այդպիսի մի պատմութիւն՝ փառաբանեցին ճշմարիտ Աստուծուն և Ս. Գէորգին. և առատաբար պարգևատրելով քահանային ու նորա որդուն՝ արձակեցին։

Ե.

ԼԵՒՈՆԻ ԵՒ ԹԷՈՓԱՆԷԻ ԱՁԱՏՈՒԹԻՒՆԸ.

Ս. Գէորգի գործած նախընթաց հրաշքի նման պատահեցաւ մի հրաշք և ս Պափլագոնիա երկրում. Ամասրիա քաղաքում ապրում էր

Լևոն անունով մէկ մարդ իւր Թէոփանէ կնոջ հետ։ Երկուսն էլ մեծ հաւատ և ջերմեռանդութիւն ունենալով դէպի Մեծ Նահատակ Ս. Գէորգը՝ միշտ յաճախում էին նորա տաճարը, որը գտնւում էր Պարթինոս գետի մօտ։ Այդ գետի անունով և կոչուած էր. եկեղեցին Պարթեհիա.

Այդ եկեղեցին դոքա մեծաշուք ճոխութեամբ զարդարեցին և զեղեցկացրին իրանց հաշւով. 'ի նշան սիրոյ դէպի Սուրբ Գէորգը, որին պատւում էին իբրև Հովանաւոր, պահապան և պաշտպան, իրանց և բոլոր իրանց կալուածներին։ Նոքա ամեն տարի տօնում էին յարդանքով և ջերմեռանդութեամբ Ս. Նահատակի յիշատակը առատ ողորմութիւն բաժանելով աղքատներին։

Այդ օրը նոքա ճոխ ճաշկերոյթ պատրաստեցին աղքատների, օտարականների, կարօտեալների, ազգականների և դրացիների համար։

Նոքա ունէին միակ դաւակ, որին 'ի պատիւ և ի յիշատակ իրանց պաշտելի Ս. Նահատակի՝ անուանել էին Գէորգ։

Այդ ժամանակ Բիւզանդիոնում թագաւորում էր Լևոն Մեծիմաստ կայսրի որդի Կոստանդինը, որի օրօք պատերազմ ծագեց Բուլղարացոց և Յունաց մէջ. Բոլղարացիք Հուն-

զարացիների և Գոթացիների հետ միասին յարձակուեցին Յունական գաւառների վրայ, աւերեցին և դերի տարան բնակիչներին, Յունական կառավարութեանը դրանով ստիպեցին զօրք կազմել պաշտպանութեան համար. և որովհետև Ամաստրիս քաղաքի բնակիչ Լևոնը նոյնպէս զինուորական էր. նրան ևս հրամայուեցաւ գնալ պատերազմ:

Լևոնը արդէն ծեր էր. և մտածեց իւր փոխանակ Գէորգ որդուն ուղարկել պատերազմի:

Գնողները ամենից առաջ իրանց զաւակի հետ միասին գնացին վերոյիշեալ եկեղեցին և կանգնելով Ս. Նահատակի պատկերի առաջ աղօթում էին այսպէս.

— «Քեզ ով Մեծ Նահատակ Սուրբ Գէորգ, պահ ենք տալիս մեր սիրած և միակ որդուն, որը կոչել ենք Քո անունով, Քեզ սիրելու համար: Դու եղիր նրա առաջնորդը ճանապարհին, և պահպան՝ պատերազմի դաշտում. և ողջ ու առողջ վերադարձրու նրան մեզ: Յոյց տուր քո բարերարութիւնը իբրև պտուղ մեր հաւատի. և մենք Քեզ իբրև մեր պաշտպանի և հովանաւորի կփառաբանենք շատ բարեգործութիւններով».

Աղօթելուց յետոյ նոքա ուղարկեցին իրանց զաւակին Յունաց զօրաբանակը:

Պատերազմի սկզբում Յոյներն էին յաղթում Բուլղարացոց. իսկ յետոյ Աստուծու թոյլտուութեամբ Բուլղարացիք յաղթեցին յոյներին: Այդ արիւնահեղ պատերազմի մէջ ընկան բոլոր յոյները. հազիւ թէ ազատուող եղաւ: Լեւոնի Գէորգ որդին Ս. Գէորգի աղօթքներով մահից ազատուեց և դերի ընկաւ մէկ բուլղարացու ձեռքը:

Բուլղարացին տեսնելով Գէորգի երիտասարդութիւնը և գեղեցկութիւնը խղճաց նրան և տարաւ իւր երկիրը, ուր Գէորգը ծառայում էր նրան ինչպէս ստրուկ:

Լեւոնը և Թէոփանոսը լսելով յոյների ցաւալի վիճակը և տեսնելով իրանց զաւակը չվերադարձաւ՝ լալիս էին և հառաչում անմխիթար կերպով, ենթադրելով որ նա ձերբակալուած է և սպանուած: Ընկնելով Մեծ Նահատակ Սուրբ Գէորգի պատկերի առաջ՝ նոքա աղաղակում էին.

—«Ո՛վ Քրիստոսի Նահատակ, այդ յուսով հաւատացինք մենք Քեզ մեր սիրելի միակ զաւակը, որը կերակուր է եղել երկնքի թռչուններին և երկրի դազաններին: Այդպէս Դու լսեցիր մեր ամենօրեայ աղօթքը և հառաչանքը. եթէ չէիր գթաշարժւում մեր ծերութեան վերայ, գոնէ խղճայիր նորա երիտասարդութեան

մասին։ Ինչու արհամարհեցիր մեզ նզովեալներիս. ո՞վ կամակատարդ Աստուծոյ»։

Այս և այսպիսի խօսքերով, անմխիթար լացով և հառաչանքներով, երկար ժամանակ աղաղակում էին նոքա դէպի Նահատակը. մանաւանդ մայրը, որը անընդհատ լալիս էր դառնապէս. բոլոր այնտեղ եղողները նոցա վիշտն ու հառաչանքը տեսնելով՝ նոյնպէս լալիս էին։

Օգոստոս ամսին Յոյների պարտութիւնից յետոյ, անցաւ աշունն ու ձմեռը. և եկաւ ապրիլ ամիսը, երբ Մեծ Նահատակի յիշատակի տօնն էր։

Լեռնը իւր ամուսնոյ հետ թէև յուսահատուած էին տեսնելու այլևս իրանց որդուն, համարելով պատերազմում սպանուած, սակայն և այնպէս չէին թողնում իրանց ջերմեռանդութիւնը դէպի Ս. Նահատակը. և ըստ սովորութեան պատրաստեցին, ինչպէս և միշտ, մի ճոխ ճաշկերոյթ։

Պատարագից յետոյ նոքա հրաւիրեցին իրանց մօտ շատ հիւրեր. մերձաւորներին, հեռաւորներին, ազգականներին, օտարականներին, աղքատներին և դրացիներին. ճաշին ոչ մի բանի նրայ չէին խօսում բացի միայն Գէորգ որդու վրայ. որը չէր վերադարձել պատերազմի դաշտից։

Ծնողները չէին դադարում լաց լինելուց, իսկ հիւրերը մխիթարում էին նոցա. մանաւանդ հառաչող մօրը:

Իսկ դոցա որդի Գէորգը, գերութեան մէջ խոհարարի պաշտօն էր կատարում: Այդ օրը կերակուր պատրաստելու ժամանակ յիշեց ծնողներին և այդ օրուայ տօնախմբութիւնը, յիշեց ազգականներին, ծանօթներին, դրացիներին և ինքն իրան ասում էր. «արդեօք ինչ կայ իմ ծնողական տանը, ովքեր են ճաշում նրանց մօտ, յիշում են ինձ արդեօք, մեռած են կարծում ինձ՝ թէ կենդանի... և այսպիսի մտմրտումների մէջ լալիս էր և դառնապէս հառաչում:

Հասաւ պարոնի ճաշի ժամանակը և ինքը Գէորգը պէտք է մատուցանէր կերակուրը. սրբելով արտասուքը՝ վերցրեց տաք եռան կերակուրը կրակից և տարաւ:

Ցանկարծ յայտնուեցաւ նա իւր ծնողական տանը՝ կանգնելով բոլոր ճաշողների առաջ:

Բոլորը սարսափահար եղան տեսնելով անակնկալ կերպով յայտնուած Գէորգին, որը ձեռքում բռնած ունէր անօթը տաք կերակուրով:

Ծնողները կարծեցին թէ տեսիլ են տեսնում. իսկ նրը հաւատացին թէ իրականութիւն է իրանց տեսածը՝ ընկան նրա պարանոցովը և

սկսան գրկել և համբուրել նորան. և իրանց մեծ և անսպասելի ուրախութիւնից լաց էին լինում: Բոլոր ներկայ եղողներն էլ լաց էին լինում զթաշարժուելուց:

Յետոյ սկսեցին հարց ու փորձ անել Գէորգին թէ ինչպէս նա կենդանի մնաց պատերազմում, որտեղ էր և ինչպէս յանկարծակի եկաւ իրանց մօտ:

Նա մանրամասն պատմեց իւր մասին և թէ ինչ ձևով ազատուեց նա գերութիւնից.

— «Հէնց այս բոպէիս պարոնիս խոհանոցում աշխատում էի. ինձ հրամայեց այս կերակուրը տանել իրան, ես վերցրի այս և տանում էի, բայց հազիւ թէ սկսեցի սանդուխքի մի քանի աստիճանները բարձրանալ դէպի պարոնի սենեակը՝ և ահա տեսայ մի հեծեալ զօրավար: Այդ հեծեալը անսովոր լուսով փայլում էր. և դա ինքն էր, որ ինձ վերցրեց այս ամանով—և չգիտեմ ինչպէս դրեց ինձ այստեղ ձեր առաջ»:

Այս լսելով բոլորը և մանաւանդ ծնողները մեծ ջերմեռանդութեամբ փառաբանեցին Աստուծուն և Մեծ Նահատակ Սուրբ Գէորգին:

Բացի սրանից էլի մի ուրիշ հրաշք էլ կատարուեցաւ. երբ սկսեցին այդ բերած կերակուրը ուտել՝ նկատեցին որ ամանի մէջ կերա-

կուրը չէ պակասում. ինչքան ուտում էին՝ այնքան էլ աւելանում էր. ինքը ամանը փոքր էր, իսկ կերակուրը ընդամէնը մի մարդու համար էր և միանգամ ուտելու. իսկ ճաշողները շատ շատ էին: Բոլորը բաւականաչափ կերան, փառաբանելով Աստուծուն. և ասում էին.

— Մեծ Նահատակ Գէորգը իւր տօնին ուղարկում է մեզ Բուլղարացիներից այս հիանալի կերակուրը:

Յետոյ անօթը նուիրաբերեցին Ս. Նահատակի անուամբ կառուցած տաճարին, ուր որ պահպանւում էր Սրբազան անօթների 'տ միասին 'ի յիշատակ Մեծ Նահատակ Սուրբ Գէորգի կատարած փառաւոր հրաշքի: Այդ տաճարը շատ հին էր և փոքր. բնակիչները իրանց աղքատութեան պատճառով չկարողացան շինել նորը կամ նորոգել հինը. և այդպէս եկեղեցին սկսուեց քանդուել և աւիրուել:

Բայց և այնպէս նոյն տաճարում պատահեցաւ հետևեալ հրաշքը.

— Երեխայքը այդ տաճարի մօտ հաւաքուած խաղում էին. դոցանից մէկին ընկերները միշտ նեղացնում էին, նրան ծաղրում էին. և միևնոյն ժամանակ ստիպում էին որ նա համբերի իրանց արածներին:

Մէկ անգամ երեխան համբերութիւնից

դուրս գալով և չդիմանալով ընկերների կատակներին՝ նայեց եկեղեցու վրայ և ասաց.

— Ո՛վ Սուրբ Գէորգ. օգնիր ինձ յաղթել իմ ընկերներին. և ես Քեզ համար լաւ կարկանդակ կրերեմ այստեղ։

Եւ ահա այդ երեխան յաղթում է բոլորին մանկական խաղերի մէջ. և ոչ մէկ կամ երկու՝ այլ մի քանի անգամ գերազանցում է նրանց իրա ուժով։

Այն ժամանակ նա դնում է մօր մօտ և պատմում է նորան, թէ, Ս. Գէորգին խոստացած կարկանդակի մասին և խնդրում է մօրը կատարել իւր խոստումը։

Մայրը սիրելով իւր զաւակին և Աեծ Նահատակ Սուրբ Գէորգին՝ շուտով կատարեց որդու խնդիրքը և տուեց նորան մի տաք և լաւ կարկանդակ։ Նա առաւ այդ կարկանդակը, գրնաց տաճարը, գրեց սեղանի առաջ, ծունկ չոքեց, աղօթեց և վերադարձաւ տուն։

Այդ ժամանակ եկեղեցու մօտով անցնում էին չորս վանականները, որոնք մտնելով տաճարը, երկրպագեցին Սուրբ Գէորգի պատկերին և հրաշալի կարկանդակ դտան. որը դեռ ևս տաք էր և որից անուշաբոյր գոլորշի էր բարձրանում։

Վանականներն ասում էին իրար։

— Սուրբին ինչ է հարկաւոր այսպիսի կարկանդակ. վերցնենք և ուտենք. իսկ նրա տեղը խունկ դնենք։

Ուտելով կարկանդակը՝ նոքա կամենում էին դուրս դալ տաճարից. բայց չէին գտնում դռները։ Դռները երևում էին նոցա իբրև պատեր և նոքա չէին կարողանում դուրս դալ։ Այն ժամանակ ամեն մէկը նրանցից մի-մի արծաթ դրին, այնուամենայնիւ չգտան ելքը։ Յետոյ մի ոսկի դրամ դրին և աղօթեցին սուրբին որպէս զի նա օգնէ իրանց դուրս գնալու տաճարից բայց կուրացան. դրանից յետոյ չորսն էլ դրին մի-մի ոսկի դրամ և ջերմեռանդաբար աղօթեցին։ Այն ժամանակ միայն նոքա տեսան բաց դռները և անարգել դուրս գնացին։

Այդ արծաթ ու ոսկի դրամները եղան առաջին հաւաքուած փողերը եկեղեցու նորոգութեան օգտին որովհետև ամբողջ երկրում տարածուելով այդ հրաշալի անցքի միջադէպը՝ շատ Աստուածապաշտ մարդիկ իրանցից ոսկի և արծաթ էին նուիրաբերում այդ տաճարի նորոգութեան օգտին։ Այդ հաւաքուած փողերով մի մեծ քարաշէն և հոյակապ եկեղեցի կառուցին. և զարդարեցին անհրաժեշտ սպասներով, անօթներով, գրեստներով և պատկերներով.

Այդ եկեղեցում կատարւում էին փառաւոր հրաշքներ 'ի փառս Քրիստոս Աստուծու և 'ի դովեստ Սրբոյն Գէորգայ Մեծ Նահատակի։

Զ.

ՀՈՎՈՒԻ ԲԺՇԿՈՒԻԼԸ ՕՁԻ ԽԱՅԹՈՑԻՑ։

Գարձեալ յայտնի է, Մեծ Նահատակ Սուրբ Գէորգի մի հրաշքը, որ ցոյց է տուել մի օձաձաւար երեխայի վրայ։ Մի Աստուածահաճոյ վարդապետ, Գէորգ անունով, պատմում է հետեւեալը.

—«Ես, ասում է նա, ձեռքիս խաչ բռնած բարձրանում էի սարը. և ահա պատահեցաւ ինձ մի ծերունի վարդապետ. և առնելով ինձանից խաչը՝ առաջ էր գնում և քիչ անցնելուց յետոյ, ծռուեց դէպի նեղ ճանապարհը։ Ես հետևում էի նրան. այնտեղ արածում էր ոչխարների հօտը. իսկ հովիւ տղան պարկած գետնի վերայ օձի խայթոցից մեռնելու վրայ էր։ Այնտեղ մօտիկ՝ մի աղբիւր կար և ծերունին ասաց ինձ. հանիր ջուր և խաչալուայ անենք։ Այդ անելով՝ բաց արինք տղայի շրթունքները և խաչալուայի ջրից ածում էինք նրա բերանը։ Ծերունին ասաց. «Յանուն Ամենասուրբ Երրորդութեան, բժշկում է քեզ Աս-

տուծոյ ծառայ Սուրբ Գէորգը»։ Յետոյ տղան փոքր ինչ շունչ առաւ, նրա փսխուածքի միջոցաւ թոյնը դուրս եկաւ. և նա ոտի կանգնեցաւ։

Ֆերունին հարցրեց նրան. ասա՛ ինձ, ինչո՞ւ դու երեկ երդուեցիր խեղճ այրու մօտ, ասելով՝ թէ նորա ոչխարը, որը նա քեզ տուել էր արածացնելու, գայլն է կերել։ Իսկ դու ծախել ես նրան երեք արծաթով»։ «Այդ այդպէս էր. ասաց տղան. բայց դու ի՞նչպէս իմացար այդ բանը»։ Ֆերունին պատասխանեց, ես նրստած էի իմ խցում. յանկարծ եկաւ ինձ մօտ մի մարդ, սպիտակ ձիու վրայ նստած և ասաց. «ո՛վ Սաֆրոնիա. վե՛ր կաց և շուտով դնա՛ դէպի այն աղբիւրը, որը քեզանից դէպի հարաւ աջ կողմն է ընկնում. այնտեղ կգտնես օձահար մի տղայ. այնտեղ և՛ս կպատահի քեզ և մի վարդապետ, որը կունենայ ձեռքում բռնած փայտեայ մի խաչ. ա՛ռ այն խաչը, խաչալուայ արա, և ջուրը տուր տղային որ խմի, ասելով. Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն Սրբոյ, բժշկում է քեզ ծառան Աստուծոյ Նահատակ Գէորգը. ասա նրան, սրանից յետոյ չերդուես ո՛չ Աստուծոյ անունով և ոչ նրա Սուրբերի անունով. և ոչ մէկին էլ վատութիւն չանես, և յետ տուր այրուն իր ոչխարը, որպէսզի աւելի

վատ բան չլինի քեզ»։ Ծերունու այս խօսքերը լսելով Հովիւ տղան՝ ընկաւ նրա ոտները և ասաց. «Ներիր ինձ, Հայր, որ ես այդպէս վարուեցի. ես ծախեցի այրու ոչխարը երեք արծաթով և երեկ նրան խաբեցի՝ թէ գայլն է կերել։ Թէթէ չգիտես ինչպէս ես աղքատ եմ, ասաց ինձ կինը, և դու այդպէս ես վարուում ինձ հետ։ Բայց իմ փոխարէն կպահանջէ քեզանից իմ ոչխարը Աստուած և Ս. Գէորգը. որովհետև ես խոստացել էի այդ ոչխարը տալ չքաւորներին Ս. Գէորգի տօնի օրը։ Իսկ ես, շարունակեց պատանին, այդպիսի մի յանցանք գործելով, խնդրում եմ քեզ Ս. Հայր. աղօթիր ինձ համար Աստուծուն և Ս. Գէորգին որպէս զի ինձ ներուի այդ յանցանքը. իսկ այժմ կը-տամ այրուն երեք ոչխար Ս. Գէորգի տօնի օրը. և այսուհետև էլ մինչև մահս, այդ Սուրբի տօնին կտամ չքաւորներին իմ աշխատանքիս տասն երրորդ մասը»։

Ահա այս կերպ սուղջացած Հովիւը երանելի Սաֆրոնիայի աղօթքներով իւր մեղքերին թողութիւն ստացաւ և դնաց իւր գործին։

Է.

Ս. ԹԵՈԴՈՐՈՍ ՍԻԿԻՈՏԱՑՈՒՆ ՀԱՍԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆԸ ՄԱՆԿԱԿԱՆ ՀԱՍԱԿՈՒՄ։

Մեծ Նահատակ և բազմայաղթ Սուրբ Գէորգի հրաշքների պատմագրութեան մէջ Դիմիտրի Բասսովսկին չի մացրել յիշեալ հրաշքը. այն ինչ Թէոդորոս Սիկիոտացու վարքագրութեան մէջ այդ հրաշքը յիշատակուած է։ Ս. Թեոդորոս Սիկիոտացու մանկական հասակի նկատմամբ սաւում է հետևեալը։

Երբ Թեոդորոսը և տանեցիք քնած են լինում խոր քնի մէջ՝ գալիս է նրա մօտ Մեծ Նահատակ Սուրբ Գէորգը և զարթեցնում է նրան ասելով.

— «Վե՛ր կաց, Թեոդորոս, արդէն արշալոյսը ծագեց և հասաւ առաւօտուայ աղօթքի ժամը. գնանք Ս. Գէորգի եկեղեցին։

Այն ժամանակ տղան ուրախութեամբ վեր է կենում և յօժարութեամբ գնում է եկեղեցի։

Ակզբում Ս. Գէորգը երևում է նրան իրանց տան մէջ բնակող Ստեփաննոսի կերպարանքով, յետոյ երևում է իւր իսկական կերպարանքով. ամեն գիշեր զարթեցնելով և տանելով եկեղեցի։

Ճանապարհին չար հոգիները կամենում էին վախեցնել տղային՝ գայլերի և զանազան տեսակ գազանների կերպարանքներ էին ստանում և յարձակվում էին նրա վրայ. բայց Մեծ Նահատակը առաջից գնալով՝ նիզակը ձեռքին բռնած՝ հեռացնում էր այդ ահաւոր երևոյթները և խորհուրդ էր տալիս Թեոդորոսին չվախենալ։

Այդպէս պատահում էր ամեն գիշեր։ Մայրը և ուրիշ կանայք զարթելով և չտեսնելով Թեոդորոսին անկողնումը, տարակուսանքի մէջ էին՝ թէ ինչպէս է գնում նա որ իրանք չեն կարողանում նկատել. քանի որ նա քնում է իրանց մէջ։

Մայրը վախենում էր, կարծելով որ գազանները կարող են նրան պատառոտել. որովհետև այն ժամանակ ձայն կար թէ գայլը փախցնում է ոչ թէ միայն անասուններին այլ և փոքր երեխաներին. և այդ պատճառով նա խիստ արգելեց նրան տանից դուրս գնալ, մինչ արևի ծագումը. որովհետև տեղը անմարդաբնակ էր։

Բայց և այնպէս տղան չէր լսում մօրը և ժամադրեալ միջոցին գնում էր եկեղեցի և ոչ ոք այդ չէր նկատում. նորան միշտ զարթեցնում էր Ս. Գէորգը։

Մէկ անգամ մայրը և ուրիշ կանայք զարթնելով լուսադէմին չգտան Թեոդորոսին անկողնումը. բարկացան և մտնելով եկեղեցի, դուրս բերին այնտեղից. իսկ մայրը մազերից բռնելով և ծեծելով՝ քաշ տուեց դէպի տուն և ամբողջ օրը տանից դուրս չթողեց. իսկ գիշերը ամուր կապեց մահճակալից, որպէսզի նա ոչ մի հնարքով չկարողանայ դուրս գնալ:

Այդ գիշեր Մեծ Նահատակ Սուրբ Գէորգը երևաց երազում Թեոդորոսի մօրը և միւս կանանց. կողքից կախած սուրը, որով սպառնում էր նրանց. ասելով բարկացած.

— Ես ձեր գլուխները կ'կտրեմ. եթէ էլի կծեծէք տղային և կարգելէք նրան գալ ինձ մօտ:

Սարսափահար եղած կանայք՝ զարթեցին և մէկ մէկու պատմում էին իրանց տեսիլքը և Մեծ Նահատակի սպառնալիքը. և մանաւանդ սարսափեցան այն դէպքում՝ որ բոլորն էլ միևնոյն տեսիլն էին տեսել. այնուհետև արձակելով Ս. Մանկանը իւր կապանքներից, ամեն կերպ փայփայում էին նրան սիրով, որպէսզի նա ծեծի համար չբարկանայ իրանց վրայ:

Նոքա հարցնում էին նորան, թէ ինչպէս էր որ նա, լուսադէմին գնալիս, չէր վախենում գազաններից:

Նա պատասխանում էր. որ ամեն դիշեր մի գեղեցիկ պատանի զարթեցնում էր իրան և տանում էր եկեղեցի, պաշտպանելով ճանապարհին ամեն տեսակ վտանգներից։

Այնուհետև կանայք հասկացան որ Մեծ Նահատակ Սուրբ Գէորգն էր, որին տեսան երազումը, նրան երևացողը և նրան պահպանողը։

Եւ դրանից յետոյ ոչ մի բանում չէին խանգարում Թեոդորոսին, այլ յանձնելով նրան Աստուծոյ նախախնամութեանը՝ ասացին. «Թող Աստուծոյ կամքը լինի»։

Տասներկու տարեկան հասակում Թեոդորոսը եկեղեցում տեսած նշանաւոր երազից յետոյ աւելի ևս ջերմեռանդօրէն սկսաւ աղօթել Աստուծուն ամբողջ մեծ պասին։ Եւ երբ հասաւ Քրիստոսի Յարութեան տօնը, այն ժամանակ չար հոգին չկարողանալով տանել այդ բարեգործ մանկան առաքինի կենցաղը, նորան կորցնելու նպատակով դիմեց հետևեալ խորամանկութեանը։

Մէկ անգամ այդ չար սատանը Թէոդորոսի դպրոցական ընկեր Հերոնդիոսի կերպարանքը առնելով՝ եկաւ նրա մօտ և հրաւիրեց գնալ զբօսանքի. տարաւ նրան մի բարձր բլուրի վրայ որ կոչւում էր Յիդրամա և կանգնացնելով մի բարձր ժայռի վրայ ինչպէս երբեմն

առաջ Քրիստոսին անապատումը, սկսեց փորձել նրան ասելով. ով բարի Թէոդորոս, թէ ուզում ես քո քաջութիւնը փորձել՝ ցած թռիր այստեղից։

— Վախենում եմ. պատասխանեց Թեոդորոսը, որովհետև շատ բարձր է։

— Դու ուսումնարանումը միշտ եղել ես ամենքից քաջը. ասաց չար սատանը. իսկ սորանից այժմ վախենում ես։ Ահա ես չեմ վախենում և ցած կթռչեմ։

— Մի անի այդ. ասաց Թեոդորոսը. թէ չէ կջախջախուես.

Չարհոգին հաւատացնում էր որ իրան ոչ մի փորձանք չի պատահի։

Այն ժամանակ ասաց Թեոդորոսը. եթէ դու ինձանից առաջ կթռչես և կենդանի կմնաս՝ այն ժամանակ միայն ես քեզ կհետևիմ.

Սատանան թռաւ սարսափելի մի խորութեան մէջ, ուղիղ կանգնեց և կանչում էր իւր մօտ Թեոդորոսին, որպէսզի հետևի իւր օրինակին։

Այդ տեսնելով Թեոդորոսը՝ սարսափահար եղաւ և մտածում էր. Ինչպէս է որ Հերոնդիոսը, որ մինչև այժմ այդպիսի մի համարձակութիւն չունէր՝ կարողացաւ ցած թռչել առանց մի որևէ փորձանքի։ Այդ մտմտում մի

մէջն էր Թեոդորոսը. իսկ միւս կողմից էլ սատանան նրան կանչում էր. և ահա երևում է նրան Մեծ Նահատակ Սուրբ Գէորգը, որը բռնելով Թեոդորոսի ձեռքը՝ ասում է նրան.

—«Հեռացիր այստեղից և հետևիր ինձ. մի՛ լսիր այդ փորձիչին որը քո հոգին ուզում է կորցնել։ Դա ոչ թէ Հերոնդիոսն է, այլ մեր ցեղի թշնամին է։

Եւ Մեծ Նահատակը պատանուն բերեց իւր եկեղեցին, ուր որ թողել էր նորան։

Երրորդ անգամ երբ Թէոդորոսը մրսելուց հիւանդացել էր, երևաց նրան Սուրբ Գէորգը երազում, և հարցրեց.

— Ինչից ես հիւանդացել տղաս։

Տղան բաց անելով աչքերը, տեսաւ հեռու անգնած պիղծ հոգուն և ցոյց տալով նրան՝ ասաց.

— Ահա այն անպիտան և զզուելին տրուեց ինձ այս հիւանդութիւնը։

Ս. Գէորգը բռնեց սատանային, սաստիկ չարչարեց նրան և հալածեց. իսկ Թեոդորոսի ձեռքը բռնելով՝ ասաց նրան.

— Վերկաց և առողջացիր. նա՝ որ չարութիւն անելուց ամենևին չի դադարում, այլ և ս քո աչքերին չի երևայ։

Այնուհետև Թեոդորոսը զարթելով քնից՝ վերկացաւ և իրան բոլորովին առողջ զգաց։

Ս. Թեոդորոսի բազմաշխատ օգտակար և բոլոր կեանքի ընթացքում Ս. Գէորգը միշտ ցոյց էր տալիս նրան իւր պաշտպանութիւնը և արագահաս օգնութիւնը։

Ս. Թեոդորոսի մահուանից առաջ Մեծ Նահատակ Սուրբ Գէորգը երկու անգամ երևաց նրան երազում։

Առաջին երազում տալիս է նրան ճանապարհորդային մի գաւազան և կանչում է իրա-հետ մի հեռաւոր ճանապարհորդութիւն անելու։

Յետոյ երևում է ձիաւորի կերպարանքով և բերելով մի ուրիշ ձի ասում է. «նստի Թեոդորոս, այս ձիու վրայ և հետևիր ինձ»։

Այս երազներով Ս. Թեոդորոսը զգաց իւր մօտահաս մահը։

Ը. *)

ՎԻՐԻՏՈՒՄ ՊԱՏԱՀԱՆ ՀՐԱՁԳԸ.

Ի հարկաւոր լռել վիշապի սպանման այն

*) Վիրիար—որ այժմեան Բէյրութն է, այդ հրաշքի մասին իրական յիշատակութիւններ ունի պահած—այս որ կան հեթանոսական տաճարից մնացած սիւների (կոլոնների) բեկորները և հին պարսպի մնացորդները։ Լուդեան էր միևնոյն ժամանակ և Ս. Գէորգի ծննդավայրը, ինչպէս ասում է մի աւանդութիւն։

մեծ հրաշքի մասին որը ցույց տուեց Մեծ Նահատակ Սուրբ Գէորգը Պաղեստինի Վիրիտ քաղաքի մօտ—որը շատ հեռու չէ ընկնում Լինդիա քաղաքից ուր որ թաղած է Սուրբը Նահատակի մարմինը:

Դեր հին ժամանակից այդ հրաշքը նկարուած էր պատկերների վերայ. այդ հրաշքի մասին Պաղեստինում ալժանահատատ նկարագրութիւնների մէջ յատկապէս յիշատակութիւն է լինում և նոյն տեղացի ճանապարհորդներին այդ հրաշագործութեան տեղը ցոյց է տուած:

Լիբանանու լեռներից ոչ հեռու և Վիրիտի մօտ կար շատ մեծ լիճ, որի մէջ ապրում էր ահագին և սարսափելի մի վիշապ: Այդ վիշապը ջրից դուրս գալով յարձակում էր մարդկանց վրայ, բռնում էր նրանց և քաշելով լիճը՝ այնտեղ ուտում էր:

Փողովուրդը շատ անգամ զինաւորուեց նրա դէմ, բայց վիշապը փախցնում և սարսափեցնում էր նոցա: Մօտենալով քաղաքի պարիսպներին, վիշապը վարակում էր օդը իւր թունաւոր արտաշնչութեամբ. այնպէս որ շատերը հիւանդանում էին և մեռնում:

Քաղաքում միշտ լացի ձայներ էին լսւում, բոլորը յուսահատութեան մէջ էին և

չէին իմանում ինչ անել։ Թագաւորը և ժողովուրդը կուապաշտ էին։

Մէկ անգամ ժողովուրդը գիմեց Թագաւորին ասելով «Ինչ պէտք է անենք—չէ՞ որ մենք կորչում ենք այս վիշապից։

Նա պատասխանեց, ես կհարցնեմ աստուածներին և ինչ որ նոքա կասեն՝ այն կը յայտնեմ ձեզ։

Թագաւորը հարցրեց կուռքերին՝ և նրանց մէջ բնակուող մարդկանց հոգիներ կոչոնող դեւերին։ Դեւերը նոքան այսպիսի մի խորհուրդ տուին. որ եթէ բնակիչները չեն ուզում բնաջինջ լինել. ապա ուրեմն, թող հերթով վիճակ ձգեն տղաների և աղջիկներանց վրայ և որին վիճակը կընկնի՝ տանեն ձգեն վիշապի առաջ։ Իբրև կերակուր։

Յայտարարելով ժողովրդին այս պատգամը՝ ինքը իւր կողմից աւելացրեց, թէ երբ հերթը ինձ և ես կհասնի՝ այն ժամանակ ես էլ իմ աղջիկս կզոհեմ վիշապին, թէև միակ դաւակս է։

Բոլոր բնակիչները, թէ՛ յարոնիները և թէ հասարակները համաձայնելով ստատանալի թելադրած մի այսպիսի խորհրդին, ամենայն օր տալիս էին իրանց որդիքը վիշապին կերակուր։ Նոքա հիւանդի զուգում էին տղերանց և աղջկերանց, բերում էին լճի մօտ և թողնելով ա-

փին, թէպէտ սաստիկ ափսոսում և դառնապէս լալիս էին նոցա վերայ. վիշապը դուրս էր գալիս լճից, յսիշտակում էր նոցա և քաշում էր դէպի ջուրը։

Վերջապէս հերթը հասաւ թագաւորին ժողովուրդը եկաւ նրա մօտ և ասաց.

Ահա թագաւոր, քո խորհուրդով և հրամանով մենք բոլորս էլ տուինք մեր երեխաները վիշապին. մեր հերթը աւարտուեց. այժմ ինչ կհրամայես մեզ անել։

—Կտամ ես իմ միակ աղջիկս՝ պատասխանեց թագաւորը. իսկ յետոյ կյայտնեմ ձեզ ինչ որ կասեն աստուածները։

Կապելով աղջկանը՝ թագաւորը հրամայեց հիանալի հագնուել։ Վշտահար թագաւորը լաց էր լինում իւր ամբողջ ընտանիքով. բայց չհամարձակուելով խանգարել, և իւր կարծիքով, աստուածային դատավճիռը. հրամայեց տալ իւր աղջիկը կերակուր վիշապին, իբրև զոհ դժոխքի անդունդի աստուծուն։ Արձակելով աղջկանը, ինքը և բոլոր ընտանիքը պալատի պատշգամբից նայում էին արքայադստրի վրայ։

Աղջիկը, որը սովորաբար մնացել էր նոյն տեղումը, ուր որ պատրաստում էին վիշապի զոհերը, լճի ափին կանգնեց և դառնապէս հառաչում էր, և երկիւղով սպասում էր մահուան

ժամին—թէ երբ վիշապը դուրս կգայ լճից և կյարձակուի իւր վրայ։

Եւ ահա բոլորի փրկութիւնը կամեցող և այդ քաղաքի բնակիչներին մարմնաւոր և հոգևոր կորստից ազատող Աստուծու նախասահմանութեամբ յայտնուեցաւ այնտեղ Մեծ Նահատակ Սուրբ Գէորգը, երկնային թագաւորի զինուորը։ Նա նստած էր ձիու վրայ և նիզակը ձեռքին։ Տեսնելով լալահառաչ աղջկանը, մօտեցաւ նրան և հարցրեց՝ թէ ինչու նա այնտեղ կանգնած է և ինչու համար է լաց լինում։

Աղջիկը պատասխանեց.

— Արի պատանի. հեռացիր այստեղից շուտով, թէ չէ կկործանուես ինձ հետ միասին։

— Մի վախենար. ասաց նրան Սուրբը, բայց ասա ինձ ինչին ես սպասում և ինչու է նայում քեզ վերայ ամբոխը հեռուից։

— Տեսնում եմ որ դու քաջազօր ես, ով գեղեցիկ պատանի. ասաց նա. բայց ինչու ես ուզում մեռնել ինձ հետ. հեռացիր շուտով այստեղից։

— Չեմ հեռանալ, ասաց սուրբը, մինչև չես ասի ինձ բոլորը ճշմարտութեամբ. ինչու ես այստեղ կանգնած և լալիս և ումն ես սպասում։

Այն ժամանակ աղջիկը պատմեց նրան կարգով բոլորը իւր և վիշապի մասին։

Ս. Գէորգը քաջալերեց նրան և մխիթարելով ասաց. Մի վախենար. որովհետև յանուն տեառն Իմոյ Յիսուսի Քրիստոսի ճշմարիտ Աստուծոյ. ես կազատեմ քեզ վիշապից։

— Բարի զինուոր, պատասխանեց նա, մի կամենար կործանուել ինձ հետ. այլ փախիր շուտով այստեղից և ազատիր դու քեզ դառն մահից. բաւական է և այն՝ որ ես այստեղ պիտի մեռնեմ, որովհետև ինձ չես կարող ազատել վիշապից և ինքդ էլ կկործանուես։

Հազիւ թէ այս խօսքերը Սուրբին ասեց և ահա լճից դուրս եկաւ սարսափելի վիշապը և սկսեց մօտենալ պատրաստուած զոհին։

Այս տեսնելով աղջիկը՝ գոռաց բարձր ձայնով, փախիր ով բարի մարդ, ահա գալիս է վիշապը։

Բայց Սուրբ Գէորգը խաչակնքեց իրան և դիմելով Աստուծուն՝ ասաց. «Յանուն Հօր և Որդւոյ, և Հոգւոյն Սրբոյ». յարձակուեց ձիով վիշապի վրայ, և շարժելով նիզակը՝ խփեց բերանին, վիրաւորեց նրան և ցցեց գետնի վրայ. իսկ ձին տրոփում էր նրան ոտներով։

Յետոյ Ս. Գէորգը հրամայեց աղջկան իւր

զօտիկով կապել վիշապին ինչպէս մի չնչին շուն և քաշ տալ դէպի քաղաքը։

Ժողովուրդը զարմանալով որ արքայադուստրը բերում է հրէշին՝ սկսեցին փախչել։

Այն ժամանակ Ս. Գէորգը ասաց նոցա.

— Մի՛ վախենաք, բայց ապաւինեցէք Տէր Յիսուս Քրիստոսին և հաւատացէք Նրան։ Նա ահա՛, ուղարկեց ինձ ձեզ մօտ, որպէսզի ազատեմ ձեզ վիշապից. սորանից յետոյ Ս. Գէորգը այն վիշապին քաղաքի մէջտեղը սպանեց իսկ ժողովուրդը քաշ տալով նրա դին քաղաքից դուրս՝ այրեց նրան։

Այն ժամանակ թագաւորը և ամբողջ ժողովուրդը հաւատացին Քրիստոսին և ընդունեցին Ս. Մկրտութիւնը. մկրտուողների թիւն էր 25,000 չհաշուելով կանայքն ու երեխայքը։

Յետոյ միևնոյն տեղում շինեցին մեծ և գեղեցիկ եկեղեցի յանուն ամենասուրբ Աստուածածնի և 'ի պատիւ բազմայաղթ Սուրբ Գէորգի, որը ինչպէս որ ազատեց արքայադստրին այդ երևելի վիշապից՝ նոյնպէս և պահպանում է Քրիստոսի Սուրբ և անբիծ եկեղեցին և իւր օգնականութեամբ ամենայն մի ուղափառ հոգի փրկում է դժոխքի անդնդային աներևոյթ կորուստնող չարից և մեղքից, իբրև թունաւոր վիշապից։

Միևնոյն եկեղեցում մի ուրիշ հրաշք ևս կատարուեց. Երբ կարուցած եկեղեցին օծեցին յանուն ամենամաքուր Կոյս Աստուածածնի և 'ի պատիւ բազմայաղթ Ս. Գէորգի՝ այս ժամանակ 'ի նշան Հեղման նոյա վերայ Աստուածային շնորհաց, Ս. Սեղանից կենդանի ջրի աղբիւր հոսեցաւ, որը բժշկութիւն էր տալիս բոլոր հաւատով մօտեցող հիւանդներին։

Թ.

ՍԵՒ ԽՈՎԻ ՎՐԱՅ ՊԱՏԱՀԱՆ ՎՏԱՆԳԻՑ ԱԶԱՏՈՒԵԼԸ.

Խրիմի հարաւային մասում, այժմեան Բալակլաւի նաւահանգստի և Սեւաստոպոլի նաւակացման մէջ տեղումը, գտնւում է Տրաքէյեան կամ Հէրակլեան Փոքր Թերակղզի, որի վրայ Քրիստոսի ծնունդից վեց տարի առաջ շինուած կար, խերսոնիս։

Այստեղ Պարտենեոն Հրուանդանի վերայ որ վերջերը Ֆինշէնտ անուանուեցաւ, Քրիստոսի թուականի առաջին դարում կարուցած էր մի տաճար որ եղաւ այժմեան Գէորգեան վանքի հիմնադրութեան առաջին սկզբնապատճառը։

Այդ նախնական քարայրեայ սահմարը 891 թ. վանք դարձրին և անուանեցին Մեծ Նահատակ Սուրբ Գէորգի անունով. 'ի նշան շնորհակալութեան այն հրաշալի փրկութեան՝ որ ցոյց տուեց Սև ծովի ալեկոծութեան ժամանակ։

Այս դէպքի մասին այսպէս են գրում։ Սև ծովի վրայ նաւագնաց մի քանի յոյն ճանապարհորդներ մեծ փոթորկի հանդիպեցան։ Քամին և ալիքները քշում էին նաւը դէպի Փիոլէնտի մօտակայ ծովափեայ ժայռերը, ուր անխուսափելի կորուստ էր սպասում նաւագնացներին։

Յուսահատ ճանապարհորդները իրանց աղօթքով դիմեցին Մեծ Նահատակ և Բաղմայաղթ Ս. Գէորգին. որը երևաց նոցա ափից 70 սաժէն հեռաւորութեան վերայ՝ ընկնող ահագին ժայռի վերայ։

Փոթորիկը յանկարծ դադարեց։ Ալիքները նաւը քշեցին դէպի այդ ծայրը և նրանք՝ որոնք կարծում էին թէ պէտք է կործանուեն, անվնաս դուրս եկան նաւից։

Այնտեղ 'ի զարմանս գտան Մեծ Նահատակ Սուրբ Գէորգի պատկերը, որը ափ հանեցին և 'ի նշան իրանց հրաշալի ազատութեան,

Ֆիոլենտ Հրուանդանի քարեայ տաճարի մօտ կառուցին մի վանք յանուն Ս. Գէորգայ։

Այդ նաւաղնացներից մի քանիսը այդ վանքի մօտ միաբանութիւն և մենաստան հաստատեցին և սկսան այնտեղ բնակուել։

Ս. Գէորգի հրաշագործ պատկերը գտնուում էր Գէորգեան վանքում մինչև 1779 թիւը, երբ որ Իգնատիոս Միտրոպոլիտը ռուսաց կառավարութեան կողմից խրիմից Մատիպոլիս հրաւիրուած լինելով տարաւ այնտեղ այդ պատկերը։ 1891 թուին Գէորգեան վանքի 1000 ամեայ յոբելեանը տօնելով Սրբազան Սինոդը, համաձայն Տաւրիկեան Մարտինեան եպիսկոպոսի ջանքերի, թոյլատրեց Ս. Գէորգի այդ հրաշագործ պատկերը տեղափոխել Գէորգեան վանքը։

Ս. Պատկերի տեղափոխութիւնը կատարուեցաւ անսովոր հանդիսով Սեպտ. 14-ից առաջ յոբելեանի օրը։

Վ. Ե Ր Ջ

ԳԻՆՆ Է 35 ԿՈՊ.